

Ապագա Հանդես

APAGA
Quarterly

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական եռամսյա հանդես
An International Journal of Oriental Studies



ISSN 1682-5438

Համար 54 Սեպտեմբեր , 2013 թ.

No. 54, September 2013

ԱՊԱԳԱ No. Համար 54 (69) 2013 APAGA

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական միջազգային եռամսյա հանդես
An international Quarterly Journal of Oriental studies

Արտոնատեր, Հրատարակիչ եւ Գլխավոր խմբագիր
License-holder, Publisher & Editor-in-Chief

Էդ. Բաղդասարյան / Ed. Baghdasarian, PhD.

Փոստարկղ համար 15875-9488 Թեհրան-Իրան
POBOX No. 15875-9488 Tehran – Iran

WEB: www.apagaonline.com and www.apagamonthly.4t.com
E-mail: apaga98@hotmail.com ISSN 1682-5438

Քովանդակություն

Հայերեն ՁԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անգլերեն -

Պարսկերեն ä³ ñëÇó Í áóÇ ³ Ýí ³ Ý³ ÷ áĒáóĀĬ³ Ý Ú³ ëÇÝ

CONTENTS

Armenian Assassination of Jemal Pasha

English -

Persian About name variations of “Persian gulf”

- Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
- Արտատպության դեպքում հղումը «Ապագա»-ին պարտադիր է:
- Ստացված հոդվածները չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Subscriptions: \$ 20 per year

Գինը 5000 ռիալ

ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- **ԵՐԿՈՒ ԽՈՍՔ**
- **«ՀԱՅԵՐԸ ԵՐԿԱԹՈՎ ԲՆԱՋՆՁՎԵՑԻՆ, ՍԻՐԻԱՑԻՆԵՐԸ ԱՆՕԹՈՒԹՅԱՄԲ ՊԻՏԻ ԲՆԱՋՆՁՎԵՆ...»**
- **ՋԵՄԱԼ ՓԱՇԱ**
- **ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵՑ ՈՒ ԻՐԱԳՈՐԾՎԵՑ ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**
- **ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ԱՆԵԿՍԻԱՅԻ ՈՒ ԿԱՆՏՐԻԲՈՒՑԻԱՅԻ ԲՈՒՆՈՐ ՃՆՇՎԱԾ ԱԶԳԵՐԻՆ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԼԻԱԿԱՏԱՐ ԻՐԱՎՈՒՆՔ:**
- **ԱՐԴԱՐ ՎՐԵԺԻ ՍՐԲԱԶԱՆ ԺԱՍՏ ՀԱՍԵԼ ԵՐ...**

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ներկայումս, երբ այլևս Ջեմալ փաշայի սպանության համար հետապնդման եւ պատասխանատվության վտանգ չկա, հրապարակ են գալիս բազմաթիվ ինքնակոչ սուտ հերոս-տեռորիստներ, որոնք հնարելով զանազան ստապատիր պատմություններ, իրենց են վերագրում այդ նշանավոր տեռորի կատարման պատիվը...

Որով արժանանում են մեր ժողովրդի մեծարարներին...

Ավելին: Ոմն Ներսիսյան, մի ամբողջ «աշխատություն» է ներկայացրել Հայաստանի Պետական Պատմության Արխիվ, որի մեջ առանց խղճի խայթ զգալու, անամոթաբար «պատմում» է, ավելի ճիշտ՝ զրպարտում է, թե ինքը սպանել է Ջեմալին մեր պարտիայի ականավոր առաջնորդներ՝ Ս. Օրջոնիկիձեի, Ա. Մյասնիկյանի, Գ. Աթարբեկյանի եւ այլնի հանձնարարությամբ...

Ամենայն հավանականությամբ այդ էժանագին պատվագողին, այդ յուրատեսակ մաքսանենգին հայտնի չէ, որ նախկին Պետքաղվարչության արխիվներում կան անհերքելի փաստաթղթեր, որոնց մեջ ամենայն մանրամասնությամբ արձանագրված են Ջեմալի սպանության մանրամասն պարագաները եւ հեղինակները:

Ես, որպես քաջածանոթ Ջեմալի սպանության կազմակերպման ու իրականացման մանրամասնությունների եւ այդ տեռորի իսկական հեղինակների հետագա ճակատագրին, իմ քաղաքացիական պարտքն են համարում մեր ժողովրդին պատմել ամբողջ ճշմարտությունը:

Այժմ, այսինքն 1965 թվականին, իմ կարծիքով, արդեն կարելի է անել այդ...

Ոչ թե միայն նրա համար, որպեսզի ստոր ինքնակոչների ու պատվագողների հերյուրանքներն հերքվեն ու իրենք էլ դիմակազերծ լինեն կամ դրանց նմանների հետագա հնարավոր ոտնձգություններից զերծ մնա իսկական հերոսների պայծառ հիշատակը, այլ նրա համար, որպեսզի մեր պատմության մի փոքրիկ,

բայց փառավոր էջը հայտնի լինի մեր ժողովրդին, մեր խիզախ երիտասարդությանը...

Թող իմանան, թե ովքեր էին այն հերոսները, որոնք երիտասարդ կյանքի գնով իրենց հարազատների կյանքը վտանգի ենթարկելու գնով վրիժառու եղան մեծ մարդասպանից, որով իրենց սրբազան պարտքը կատարեցին մեր միլիոնավոր նահատակների հանդեպ:

« Հայերը երկաթով բնաջնջվեցին, Սիրիացիները անօթությամբ պիտի բնաջնջվեն... »

Ջենալ փաշա

Ջենալ փաշան, որին պանիսլամական շրջանակներում մեծարում էին «ԻՍԼԱՄԻ ԱՌՅՈՒԾ» տիտղոսով, Օսմանյան կայսրության կառավորող դիկտատուրայի երրորդության (Էնվեր, ԹԱԼԵԱԹ, ՋԵՄԱԼ) անդամ էր, պատերազմի սկզբին՝ ծովային նախարար, ապա, հայկական կոտորածների ամբողջ ժամանակ Թուրքիայի Հարավային ռազմաճակատի գերագույն հրամանատարն ու դիկտատորը: Նա գործուն անդամ էր նաև Իթթիհատ պարտիայի գերագույն ղեկավար հնգյակի (Էնվեր, Թալեաթ, Ջենալ, դոկտոր Նազըմ եւ դոկտոր Բեհաեդդին Շաքիր), որոնք հղացան 20-րդ դարի առաջին ցեղասպանության՝ Հայ ազգի բնաջնջման հրեշտային գաղափարն ու սահմրոկեցուցիչ դաժանությամբ ու բժախնդիր հետեւողականությամբ իրագործեցին այն...

Ջենալը իր հուշերում զուր ջանքեր է թափում ընթերցողին հանոգելու, որ իբր ինքը մեղսակից չէ եւ պատասխանատու չէ Հայկական կոտորածների համար:

Պատմությունը արդեն ասել է իր ծանրակշիռ խոսքը: Ջենալը, Վերոհիշյալ հնգյակի անդամների, եւ ընդհանրապես Իթթիհատի ղեկավար վերնախավի հետ համահավասար պատասխանատվություն է կրում մեկ ու կես միլիոնից ավել հայերի ոչնչացման համար: Դեռ ավելին... Ջենալը պատասխանատու է նաև Արաբ ժողովրդի դեմ գործած իր հրեշավոր չարագործությունների՝ սպանությունների եւ տեղահանությունների համար: Իզուր չէ, որ Արաբները Ջենալին համարում են իրենց առաջին դահիճը...

Բազմաթիվ արաբներ հաստատում են, որ միլիոնավոր տարագրված հայության կմախքացած բեկորներ, մեծ մասամբ տարեց կանայք եւ փոքրահասակ մանկտիք, որոնք հրաշքով ողջ մնալով մի կերպ հասել էին հարավ, այսինքն Ջենալի դիկտատուրայի սահմանները՝ Կիլիկիայից մինչեւ Բաղդատ, Ուրֆայից մինչեւ Տեր-Ջօր, Ջենալ փաշայի գիտությամբ ու նրա անմիջական հրամանով կամ հովանավորությամբ տանջամահ արվեցին կամ ուղղակի կոտորվեցին:

Եւ այդ Ջենալը, այդ հայակեր բորենին, այդ արյունակղակ դահճապետը դեռ հանդգնություն ու լկտիություն ունեցավ (յուրայինները անշուշտ կասեին՝ անխոհեմություն ունեցավ) Քաբուլից Մոսկվայի վրայով Անգարա գնալիս, կանգ առնել հայաշատ Թիֆլիսում ու ավաշկարա, իր հարյուր հազարավոր զոհերի հարազատների ու ազգակիցների աչքի առաջ քեֆ քաշել ու

անհոգաբար զվարճանալ շքեղ ու հյուրասեր մայրաքաղաքի ընձեռնած հաճույքներով...

Բնականաբար Ջենալի այդ վարմունքը թիֆլիսաբնակ հայերի մեջ պիտի առաջ բերեր վիրավորանքի, նվաստացման, մանավանդ, վրիժառության զգացումներ...

Շատ հայրենասերներ առան էին կրճտացնում, բայց վախենում էին խոսել, հրապարակորեն արտահայտել իրենց զգացումները...

Իմ խոտորջուրցի ընկերներից մեկը այդ օրերին ինձ գրած նամակում ասում էր.

- Ինչ է, այդ հայակեր գազանը մեր ժողովրդին իրոք մեռատծ էր կարծում... թե՛, արժանապատվությունից ու արիությունից բոլորովին զուրկ եւ անընդունակ հատուցանելու չարագործին ըստ արժանվույն...

Մի ուրիշը, հացթուխ վարպետ, գրում էր.

- Մեր երեխաների արյան մեջ թաթախված ձեռներով եկել էր մեր եփած հացն էր խմում ու...մի գուցե, երբ ֆունիկուլիորում նստած առատ սեղանի շուրջը քեփ էր անում իր արբանյակների հետ նայելով ներքեւ, հայաշատ Թիֆլիսի վրա, մտքի մեջ ցինիկաբար ծիծաղում էր հայության վրա...

Գաղտնիք չէ, որ այդ ատենները, այն ամենը ինչ որ թեկուզ հեռվից դիպչում էր Թուրքիային, հիշեցնում էր կոտորածները, Հայերի ինքնապաշտպանողական կռիվները, ընդհանրապես թուրքական բարբարոսությունները՝ խիստ հետապնդվում էր մեր իշխանությունների կողմից ու որակավորվում էր որպես «հակահեղափոխություն»...

Մերոնք ամեն կերպ հաճոյանում ու սիրաշահում էին Քենալական Թուրքիային, նրան ցույց էին տալիս խոշոր բարոյական, ռազմական եւ նյութական օգնություն՝ այդ հայակեր փաշաներին համարելով իրենց հավատարիմ ու անկեղծ բարեկեամբներ...

Նրանց համարելով մուսուլմանական արեւելքի հեղափոխության ու նույնիսկ սովետականացման ռահվիրաները...

Հետագա տարիների դեպքերը ցույց տվին այդ քաղաքականության ամբողջ սնանկությունն ու նրա վնասակարությունը Սովետական երկրի համար... Ինչպես հաստատված է բազմաթիվ փաստերով, մեր նեղ օրերին՝ Հայրենական պատերազմի առաջին տարիներին, Քենալական Թուրքիան, որպես դաշնակից ու բարեկամ պետություն ոչ միայն մեզ չօգնեց, այլ ընդհակառակը շեշտված թշնամական դիրք էր բռնել եւ ավելի նպաստավոր մոմենտի էր սպասում, որպեսզի մեր վրա հարձակվի...

Դրա համար էլ մեր երկիրը ստիպված էր Թուրքական սահմանի վրա միլիոնավոր զորք պահել: Ինչ կասկած, որ եթե այդ զորքը գտնվեր գերմանական ճակատում, պատերազմը ավելի քիչ զոհերով եւ ավելի շուտ կվերջանար: Իսկ պատերազմը վերջանալուց հետո էլ Թուրքիան անմիջապես երկու ոտքով կանգնեց հակասովետական

պլատֆորմի վրա եւ իր բոլոր հնարավորությունները տրամադրեց հակասովետական խմբավորման...

(Այդ ամենից հետո սովետական քաղաքացին իրավամբ տարակուսանքով է հետեւում ներկայիս դեպի նույն թուրքիան տարվող սիրաշահելու եւ հաճոյանալու քաղաքականության... Միտքն անցյալի դառն փորձը անօգուտ է անցել մեր դիվանագիտության համար...):

Թե ինչիտ հիման վրա 1920-ական թվականներին մեր դիվանագիտությունը թուրք արյունակզակ ֆեոդալ փաշաներից սպասում էր արմատական հեղափոխություն՝ մնում է հանելուկ...

Ախր մեր ղեկավարներին քաջ հայտնի էր, որ Քեմալը եւ իր փաշակոնիսարները (պիտի վերհիշել որ Քեմալը, անշուշտ մեր դիվանագետներին խաբելու համար, առ ժամանակ իր մինիստրներին կոչում էր «կոմիսարներ») ձեռքն ընկած թուրք կոմունիստներին ամենայն դաժանությամբ սպանում էին... Չէտ որ թուրքական կոմպարտիան Քեմալական թուրքիայում մինչեւ այսօր էլ դեռ մի օր օրինականացած չի ու նույն դրագոնական միջոցներով հալածվում է... Չէտ որ մեր դիվանագետներին լավ հայտնի էր, որ ժամանակավորապես զրաված Ալեքսանդրապոլում, արդեն սովետական հայ բնակչության՝ սովետական քաղաքացիների, վերաբերմամբ Քեմալ փաշայի հրամանով կատարվում էին նույն կոտորածները եւ ջարդը, ինչ որ կատարել էին նրա նախորդները՝ Սուլթան Յամիդն ու Իթթիհադը...

Արդյոտք այդ քաղաքական աննախընթաց կուրություն էր, բոլշեիկյան դասակարգային-հեղափոխական զգոնության բացարձակ բթացումն էր, թեւ մի ավելի սարսափելի հանցավոր բան... Այդ, անշուշտ մի օր կպարզի անաչառ պատմությունը... Իսկ մենք միայն այդ փաստը արձանագրեցինք, ցույց տալու համար, թե այն ժամանակ գոյություն ունեցող քաղաքական պայմաններում որքա՜ն վտանգավոր էր դառնում Ջեմալ փաշայի նման նշանավոր թուրքական գործիչի սպանությունը, եւ որպիսի՜ խիստ ճնշումների տեղիք պիտի տար այն...

Այսուհանդերձ այդ ամենը շատ լավ գիտենալով հանդերձ, եղան անձնագրի մարդիկ, որոնք արհամարհելով ամեն վտանգ ու դժվարություն, անվախորեն կազմակերպեցին ու աննախընթաց համարձակությամբ ու խիզախությամբ իրագործեցին Յայ ժողովրդի մեծագույն դահիճներից մեկի սպանությունը, հենց Չեկայի քթի տակ...

* * *

Որովհետեւ Ջեմալի սպանությունը սերտ առնչություն ունի խոտորջուրցիների հետ, անհրաժեշտ է մի քանի խոսք ասել նրանց մասին եւ պարզել, թե ինչուտ հատկապես նրանց վիճակվեց այդ սպանությունը:

Խոտորջուր գյուղախումբը գտնվում էր պատմական Տայոց Աշխարհի մեջ. ըստ օսմանյան պետական վարչական բաժանման՝ Էրզրումի վիլայեթի Կիսկիմի կազայում: Խոտորջուրի ձորը սկսում է

ճորոխ գետի ափից եւ մոտ 25 կիլոմետր երկարությամբ վերջանում 3937 մետր բարձրություն ունեցող Քաջքարի լեռնագագաթով, որի վրայից պարզ եղանակին բացվում էին սքանչելի համայնապատկերներ դեպի Սեւ ծովը, Կովկասյան լեռնաշղթան ու Մասիսը:

Խոտորջուրի գյուղերը փռվել էին ճորոխի ձախ վտակի՝ Խոտորջուրի գեղադիր ափերին, սաղարթավոր ու մշտադալար փշատերեւ անտառներով ու մրգառատ պարտեզներով շրջապատված:

Աննկարագրելի գեղեցիկ էր այդ լեռնաշխարհի բնությունը, ինչպես ասվում է՝ անմահական օդ ու ջրով... Հողը շատ բարեբեր էր եւ շատ լավ մշակվում էր: Մերձարեւադարձային ու դաշտային գոտիներում ստացվում էր երկու բերք, բայց հողը շատ սակավ լինելու պատճառով ստացված բերքը չէր կարող լրիվ բավարարել խոտորջուրցու զարգացած, բարձր կենսամակարդակի պահանջներն ու, մանավանդ, պետական ծանր տուրքերի վճարումը...

Դրա հետեւանքով էլ տղամարդիկ համարյա անխտիր պատանեկան հասակից սկսած, ստիպված էին դիմելու պանդխտության՝ արտագնա աշխատանքի հասությով ծածկելու իրենց ընտանիքի բյուջեի բացը: Ընդհանրապես արտագնացությունը Խոտորջուրի համար դարձել էր արհեստ...

Խոտորջուրցիների ամենախոշոր պանդխտավայրը Թիֆլիսն էր, որտեղ հարյուրավոր խոտորջուրցիներ սերնդից-սերունդ բացառապես զբաղվելով հացագործությամբ, գրավել էին տեղի հացի շուկան եւ հռչակվել էին, որպես հացաթխման անգերազանցելի վարպետներ: (Ջարմանալի զուգադիպություն մը: Հայկական ուրիշ լեռնաշխարհի մը պանդխտներն ալ՝ Սասունցիները, վարպետ հացթուխի նույն այդ մենաշնորհը ձեռք բերած էին այլ քաղաքի մը մեջ, Հալեպ, ուր դեռ կը շարունակվի անոնց համբավը:)

Պանդուխտ խոտորջուրցին գալով Թիֆլիս, իր տեսակետից մի գերագույն նպատակ էր հետապնդում՝ մոռանալով իր անձնական ամեն տեսակ հաճույքներ, երկու-երեք տարի օր ու գիշեր տքնաջան աշխատելով ու ծայրահեղ խնայողությամբ կոպեկ առ կոպեկ դրամ վաստակել, որպեսզի կարողանա վերադառնալ հայրենի գյուղը, եւ միայն այնտեղ, իր ընտանիքի հետ միասին, բնության հրաշագեղ գրկում մարդավայել կյանք վայելել գոնե մի տարի... Հետո վերսկսել, եւ այդպես, տարիներով...

Այդ նպատակից ելնելով էլ Խոտորջուրցին Թիֆլիսում, մինչեւ Առաջին Համաշխարհային Պատերազմի օրերը, իրեն մեկուսացած էր պահում տեղական կյանքից եւ, ընդհանրապես չէր խառնվում ազգային-հասարակական կյանքին...

Ինչպես ամբողջ հայ աշխատավոր ժողովուրդը, խոտորջուրցին էլ անխաբելիորեն կապված էր իր ծննդավայրի հետ, իր տան ու դռան հետ, իր մի կտոր հացի հետ... Հայրենյաց սերը գերագույն պաշտամունք էր դարձել խոտորջուրցու համար. այդ սիրո համար էլ նա կորցրեց իր ընտանիքը...

Խոտորջուրցին, զոնե նրա մեծեմասնությունը, լիակատար հնարավորություն ունեի իր ընտանիքը օր առաջ տեղափոխել Ռուսաստանի սահմանները, որով խուսափած կլինեի 1915 թվի Մեծ Եղեռնից, որին համարյա ամբողջովին զոհ գնաց Խոտորջուրում մնացած ժողովուրդը... Բայց ծննդավայրի սերը արգելեց արտագաղթը... Իհարկե կային նաեւ այլ պատճառներ, որոնցից կարելի էր այն էր, որ Խոտորջուրցին հավատում էր, որ Թուրքիան վերջ ի վերջո կարթնանա ու կվերածնվի, քաղաքակիրթ երկիր կդառնա, եւ իրենք էլ դեն շարտելով պանդխտության ցուպը, տեղում կգտնեն իրենց հանապաղորդ հացը... Այդպես էին գուշակում... ՌԻտմ մտքից կանցներ այնպիսի դիվային ելք, ինչպիսին Մեծ Եղեռնը եղավ...

1914-ի աշնանը, երբ Թուրքիան հարձակվեց Ռուսաստանի վրա, Խոտորջուրցի տղամարդկանց մեծագույն մասը գտնվում էր Ռուսաստանում, ապահով դրության մեջ: Թիֆլիսաբնակ Խոտորջուրցիները ավելի մոտ լինելով ռազմաճակատին, անձկանոք ու ահով հետեւում էին զարգացող դեպքերին, որոնք օրըստօրե հայերի համար չարագուշակ ընթացք էին ստանում...

Նրանք լավ գիտեին, որ բոլոր ռուս-թուրքական պատերազմները անցյալում, այսպես թե այնպես, ուղեկցվել են կամ վերջացել են հայկական կոտորածներով...Քրիստոնյա Ռուսաստանից պարտված Թուրքիան իր պարտության վրեժը առնում էր իր հպատակ խաղաղ քրիստոնյա ժողովրդից...

Այնուհանդերձ թիֆլիսաբնակ Խոտորջուրցիները լավատես էին իրենց ծննդավայրի վերաբերմամբ...

Նախ՝ նրանք հավատացած էին, որ Խոտորջուրը մոտ լինելով սահմանին, հզոր ռուսական բանակից անմիջապես կգրավվի ու այդպեսով կազատագրվի...

Երկրորդ՝ անցյալում Խոտորջուրցիները միշտ հավատարիմ են եղել դեպի Թուրքիան, եղել են շեշտված պարկեշտ հպատակներ Օսմանյան կայսրության, միշտ պահպանողական դիրք են գրավել համահայկական-համազգային հարցերում, հեղափոխական գործիչներ չեն տվել, ֆիդայական շարժումները չեն թափանցել Խոտորջուր, տվյալ ժամանակում էլ շարունակելով իրենց պարկեշտ ընթացքը Թուրքիայի հանդեպ, դեն էին կամավորությանը եւ, ընդհանրապես հակաթուրքական որեւէ գործունեությանը, հետեւաբար թուրքական իշխանությունները որեւէ առիթ կամ պատճառ չունեին դեպի Խոտորջուրը կասկածանքով եւ անվստահությամբ վերաբերվելու եւ ճնշումների դիմելու...

Երրորդ՝ իրենք ԼԻՆԵԼՈՎ ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐ, համոզված էին, եւ հույս ունեին, որ Ավստրո-Յունգարական կաթոլիկ կայսր ֆրանց ժոզեֆը, Գերմանական կաթոլիկ թագավորի իշխանները եւ գորավարները, եւ մանավանդ, Յոռմի սրբազան Պապը երբեք չէին թույլ տալու, որ կործանվեր Արեւելքում գտնվող «Պատիկ Յոռմը», ինչպես սիրում էին կաթոլիկական շրջաններում անվանել Խոտորջուրը:

Նրանք նույնիսկ Ռուսաստանի հայ կաթոլիկների առաջնորդի միջոցով դիմեցին Հռոմի Բենեդիկտոս 15-րդ Պապին, աղերսելով օգնություն ցույց տալ թուրքիայում գտնվող իրենց ընտանիքներին, իմանալ նրանց վիճակը, սակայն Պապի քարտուղար կարդինալ Գասպարիից ստացված պատասխանի մեջ բացի Պապի հղած առաքելական օրհնություններից ուրիշ սփոփիչ ոչինչ չկար... (տես «Արմյանսկի Վեստնիկ» 1916 թիվ 2, երես 16)

Տարված այդպիսի սին հույսերով, թիֆլիսաբնակ խոտորջուրցիները շարունակում էին պատերազմի հետեւանքով աշխուժացած իրենց գործերը, դրամ հավաքում, հուսալով՝ որ երբ ռուսը գրավի իրենց գյուղը, իրենք հարուստ բեռներով պիտի վերադառնան խոտորջուր, ուրախացնելու ընտանիքներին...

Վերջապես անցան ոգեւորության ու հուսահատության դժվարին եւ հոգեմաշ ամիսները եւ փետրվարյան մի պատմական օր գրավվեց Էրզրումը, խոտորջուրը...

Անհուն ցնծության ու ուրախության մեջ խոտորջուրցիների ներկայացուցիչները մեկնեցին խոտորջուր...

Եվ ի~նչ գտան, ի~նչ տեսան...

Իրենց բարեշեն ու բազմամարդ գյուղը, ճոխ ու զվարթ խոտորջուրը, Հայոց Աշխարհի զարդ ու պարծանք խոտորջուրը չկար այլեւս... Այն ամառի էր ու անմարդաբնակ, կիսակործան ու թափուր... 7-8 հազար բնակչությունից ոչ ոք չկար այնտեղ:

Միայն հարեւան Հունուտ թուրք գյուղում մնացել էին երեք խոտորջուրցի երեխաներ, որոնց տարադրությունից փրկել էր Ալի բեգ Մինաս Օղլին, որը մեծ ազնվություն ու համարձակություն է ունեցել նյութական խոշոր զոհողություններով եւ նույնիսկ իր կյանքը վտանգի ենթարկելով՝ պանդխտության մեջ գտնվող իր հայ բարեկամների զավակներին ապաստան տալ իր մոտ, պահել իրեն իր հարազատ զավակներ...

ՋԵՄԱԼ

ՓԱՇԱ

Սովետական հանրագիտարանի մեջ

Ջեմալ-Փաշա Ահմետ (1872-1922)-թուրքական ռեակցիոն պետական գործիչ, ազգայնական բուրժուական-կալվածատիրական «Միություն եւ Առաջադիմություն» (Երիտասարդ Թուրքերի) լիդերներից մեկը. 1913թ. ծովային մինիստր եւ Ստամբուլի զինվորական նահանգապետ, ոչ-պաշտոնական տրիումփիստի անդամ (Էնվեր-փաշա, Թալեաթ-փաշա, Ջեմալ-փաշա), որը փաստորեն ղեկավարում էր Թուրքիան 1914-18 թթ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ եւ Թուրքիան ենթարկել էր գերմանական իմպերիալիզմին. տանում էր հետադիմական պանթուրքական քաղաքականություն: Միրիայում հրամանատար էր (1914-18), որտեղ Արաբների եւ Հայերի զազանային ջարդեր կազմակերպեց. պատերազմում. Թուրքիայի պարտվելուց հետո. փախավ Գերմանիա (1918): 1920-ին՝ Ռազմական խորհրդական

Աֆղանստանում: 1922-ին Թիֆլիսից անցնելիս սպանվեց հայ ազգայնականի ծեռամբ:
 ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՆՐԱՊԵՏԱՐԱՆ
 14-րդ հատոր, 1952թ., երես 218

Այդ երեք տղաների պատմածներից եւ այլ աղբյուրներից հետզհետե բացահայտվեցին խոտորջուրի տարադրման մանրամասնությունները...

Ժողովուրդը տեղահանված է երկու ստվար խմբերով՝ սկսած 1915 Յունիսի 28-ից... Բացի այդ երկու խմբերից եղել են նաեւ փոքրիկ խմբակներ՝ արտոնյալ երկու հարուստ ընտանիքի եւ անտառներում թաքնված եւ հետագայում, աշնանը հայտնաբերված երկու տասնյակ ընտանիքից բախկացած խմբակներ... Մինչեւ Երզնկա հասնելը զանգվածային կոտորածներ տեղի չեն ունեցել, թեւ հենց խոտորջուրից սկսած ամենօրյա մասնակի սպանություններն ու խժոժությունները սովորական երեւոյթ են եղել...

Բայց բռնագաղթի օրերին խոտորջուրի ժողովրդի կրած անլուր սարսափների ավելի պերճախոս վկաները հանդիսացան տների համր պատերը...

Վստահ լինելով, որ շուտով Ռուսական բանակի կողմից գրավվելու է խոտորջուրը եւ իրենց պանդուխտները վերադառնալու են տուն՝ տեղահանության վերջին պահերին շատ խոտորջուրցիներ բնակարանների տախտակե պատերին գրել էին իրենց վերջին «ուղերձ-նամակները», որոնց մեջ նկարագրում էին իրենց ապրած զարհուրելի ողբերգությունն ու իրենց հարազատներին հատուցման ու վրիժառության կոչեր էին անում...

Օ~, այդ մերձ ի մահ գրված սրտաբուխ ու սրտաճնկիկ, անպաճույճ տողերը կարելի չէր կարդալ առանց սոսկումի ու արտասուքի...

Դրանք՝ իրենց հայրենի օջախներից դաժանագույն բռնությամբ տեղահանվող ու դեպի սպանդ քշվող մեր անմեղ, մեր անտեր ու անպաշտպան ժողովրդի վերջին հեկեկանքն ու հառաչանքն էին... Նրա ոգնության վերջին կանչն ու աղաղակը... Նաեւ նրա սրբազան պատգամն ու կտակը՝ ուղղված իրենց հեռավոր պանդուխտ հայերին ու եղբայրներին, ամուսիններին ու զավակներին, նշանածներին ու ընկերներին՝ վրիժառու լինելու իրենց դահիճներից...

Թեւ այդ յուրատեսակ նամակները իր ժամանակին արտագրվել ու սրբությամբ պահվում են խոտորջուրցի պանդուխտների մոտ, սակայն այժմ հնարավոր չեղավ դրանք գտնել, որովհետեւ անհատի պաշտամունքի տարիներին մարդիկ վախից ոչնչացրել են նմանօրինակ ամեն մի թուղթ: Չէտ որ դրանք հիշեցնում էին Հայի տառապանքն ու Թուրքի ոճրագործությունը... Եվ, մանավանդ, վրիժառության ու հատուցման կոչեր էին պարունակում...

Դրանցից մնացել են միայն «Արմյանակի Վեստնիկ» ժուռնալի 1916 թվի 25-ում լույս տեսած հայտնի գրող Ատրպետի հոդվածում մեջ բերված երիտասարդ վարպետ Մեսրոպ Թաթմանյանի տան

պատերին գրվածները, որոնցից մի քանիսը նմուշի համար գետեղում են այստեղ

«10 Հունիսի, 1915 թ. Խոտորջուր, Խանդածոր գյուղ: Ամեն տեղ լաց ու կոծ է տիրում... Մեզ քշում են դեպի ստույգ կործանում...»

«22 Հունիսի: Թող ապագա սերունդը դատի՞թե ինչպիսի~ ոճրագործություն է կատարում թուրք կառավարությունը մեր հանդէս:»

«Ախ, ավերվեց Խոտորջուրը: Այդ հարուստ շրջանը, որ գոյություն ուներ մի քանի դար՝ դատարկված է իր բնակիչներից, որոնք շարան-շարան գնում են դեպի անդունդ, 7-8 հազար հոգու քշում են դեպի մահ... Օ~, Աստված իմ, ես խենթանում եմ... Իչպեսի~ անարդարություն, ինչպիսի~ աննարդկային հալածանք...»

«Օ~, Աստված իմ, ուտր... Ինչուտ չես հայտնվում ժողովրդին օգնելու... Քո ժողովուրդը շրջապատված է վայրենի գազաններով, կատարվում են սոսկալի ոճրագործություններ. պաշտպանիր մեզ... Ռիտր ես, միտթե չես լսում, տեր իմ...»

«ՀԻՇԵՑԵՔ ՄԵՁ Եւ ապրեցեք որպես մարդ: ՎԱՐՎԵՑԵՔ ԹՈՒՐՔԵՐԻ ՀԵՏ ԱՅՆՊԵՍ ԻՆՉՊԵՍ ՆՐԱՆՔ ՎԱՐՎԵՑԻՆ ՄԵՁ ՀԵՏ:

«Մնաք բարով, մենք գնում ենք մեռնելու... Թող Աստված պատժի Թուրքերին... Պետք է վրիժառու լինել հավիտենական ոճրագործներից...»

Ահա թե ինչ են ասում համր պատերը...

Խոտորջուրցի պանդուխտներից՝ Ֆրանսուա Բորչանյանը իր տան պատերին գրվածները կարդալուց հետո գրել էր մի ցասկոտ բանաստեղծություն, որից, դժբախտաբար, հիշում են միայն վերջին երկու տողը.

Մենք չենք մոռանա այս աղետը սոսկալի,
Կու գանք մի օր հատուցանել լիուլի...

”””
Այսպիսով պանդուխտ խոտորջուրցու բոլոր հույսերը ի դերեւ ելան, լավատես ակնկալությունները չիրականացան եւ նա մնաց սարսափելի իրողության դեմ հանդիման՝ անընտանիք, անհայրենիք...

Նա տեսավ, որ Թուրք կառավարության համար ոչ մի նշանակություն չունեցան իր դարավոր հավատարիմ հպատակությունն ու լոյալությունը, նաեւ իր կաթոլիկ լինելու հանգամանքը... Նա տեսավ, որ իր բախտը ոչնչով տարբեր չեղավ ընդհանուր Արեւմտահայության բախտից...

Նա հասկացավ եւ համոզվեց, որ Օսմանյան պետությունը դարերով հետապնդել էր Հայ ազգը բնաջնջելու, ձուլելու նպատակ սիստեմատիկ կերպով ու հետեւողականությամբ Հայերի հանդէս տարել այդպիսի քաղաքականություն, որը միայն այժմ, պարագաների «բարեհաջող» բերումով կարողացա լիովին գլուխ բերել...

Շատ ճիշտ են ասել, ու հույսը բարոյական թթվածին է... Էլի մի փոքրիկ հույսի նշույլ կայծկլտաց պանդուխտ խոտորջուրցու առաջ.

յուրաքանչյուր պանդուխտ իր հոգու խորքում փայփայում էր այն հույսը, որ տարագրվածների մի մասը անշուշտ ողջ մնացած կլինի ու պատերազմից հետո կվերադառնա եւ... դրանց մեջ կլինի իր ընտանիքի գոնե մի մասը... Այդ հույսով առաջնորդվեցին մարդիկ ու շատ պանդուխտներ վերադառնալով խոտորջուր սկսեցին վերաշինել հայրենիքը...

ԵՎ նորից ծուխ բարձրացավ ծխնելույզներից ու լամպը վառվեց սպիտակաշեն տներում... Բայց ոչ ոք չէր ամուսնանում, նոր ընտանիք կազմում... Սպասում էին... Նույնիսկ ամուրի երիտասարդները չէին ամուսնանում՝ սպասում էին...

Բայց շուտով վրա հասավ երկրորդ, ամենաանսպասելի աղետը:

Ռուս բանակի քաշվելուց հետո, 1918 թվի սկզբին, երբ դեռ չէին ընկած նույնիսկ Բայբուքն ու Կարինը, խոտորջուրը արդեն շրջապատված էր հազարավոր թուրք ամբոխով եւ Օսմանյան բանակի վաշտերով ու հրետանիով, որոնք ամիսներ շարունակ անդադար գրոհում էին մոտ 100 պաշարված խոտորջուրցիների վրա...

Թեեւ Ռուսաստանից հարյուրավոր խոտորջուրցի երիտասարդներ շտապեցին իրենց պաշարված գյուղին օգնության, սակայն ոչ Արդվինի եւ ոչ էլ Էրզրումի կողմից հնարավոր չեղավ անցնել խոտորջուր...

Խոտորջուրում պաշարվածները ամիսներ շարունակ արյունալի մարտեր մղելով ետ էին շարտում թուրքերի հարձակումները եւ միայն այն ժամանակ, երբ վերջացան բոլոր տեսակի պաշարները եւ դրսից սպասվող օգնության հույսը բոլորովին վերացավ, երբ արդեն ընկել էին ամբողջ Արեւմտահայաստանի բոլոր գավառները եւ Օսմանյան բանակը հասել էր Ղարսի դռներին, այն ժամանակ միայն թողին խոտորջուրը...

Այդ հերոսամարտը սպասում է մի կարող գրչի, որ ի վիճակի լինի պատշաճորեն վեր հանելու հայ ժողովրդի նորագույն պատմության փառավոր էջերից մեկը եւս... Իսկ ես այնքանը կարող եմ հաղորդել, որ այդ պանծալի հերոսներից միայն 10 հոգի. բազմաթիվ ողիսական արկածներից հետո, 1919 թվի գարնանը հասան Թիֆլիս:

Հետագայում դրանցից մի քանիսը մասնակցություն ունեցան Ջեմալ փաշայի սպանության գործին:

” ” ”
Վերջապես ավարտվեց Առաջին Համաշխարհային Պատերազմն ու դաշնակիցները հաղթական մտան Կ. Պոլիս:

Ամբողջ հայության հետ խոտորջուրցիներն էլ ցնծագին ողջունեցին հաղթությունը, հավատացած լինելով, որ վերջապես դաշնակիցները պարտված Թուրքիայի հետ արդար հաշվեհարդար կկատարեն ըստ իրենց մեծադղորդ խոստումների եւ հայ ժողովուրդը կստանա համապատասխան իր 1915 թվի կոտորածներից առաջ ունեցած ազգաբնակչության քանակի՝ տերիտորիա եւ կսկսվի նրա քաղաքական վերածնունդը...

Առաջին հերթին խոտորջուրցիները Թուրքիա ղրկեցին իրենց «ՏԱՅՔ» հայրենակցական միութեան կողմից մի լավ կազմակերպված եւ նյութական լավ ապահովված խուզարկու խումբ, փնտրելու տարագրված խոտորջուրցիների բեկորները: Այդ խմբի անդամները Կ.Պոլսի վրայով հասան Յալէպ, այնտեղից էլ Թուրքիայի ներսերը՝ մինչեւ Ուրֆա եւ Մալաթիա գնացին, շատ բեղմնավոր գործունեություն ծավալեցին, հարեմներից, թաքստոցներից, զանազան ողջերից դուրս կորզեցին, հանեցին, փրկեցին բազմաթիվ հայ կանանց ու մանուկների, սակայն ոչ մի խոտորջուրցու չգտան...

Ի վերջո, երկարատեւ ու համառ փնտրտուքներից հետո Մալաթիայի լեռներում հայտնաբերվեցին 7 խոտորջուրցիներ, որոնց խնայել էին քրդերը, չէին սպանել եւ օգտագործել էին, որպես արհեստավորներ...

Պարզ է, որ դրանց հայտնի կարող էին լինել մինչեւ Մալաթիա պատահած դեպքերը միայն... Իսկ խոտորջուրցիների հետ պատահած անենասարսափելի դեպքերը եւ վերջնական բնաջնջումը տեղի էր ունեցել հետո, Մալաթիայից հարավ...

Այսպիսով բուն խոտորջուրցի տարագրված շուրջ 7000 ժողովրդից գոնե մի մարդ ողջ չմնաց, չվերապրեց, չգտնվեց, որը տարագրության սկզբից մինչեւ վերջը, երկու քարավաններից մեկն ու մեկի հետ եղած լինելու եւ կարողանար, որպես ականատես պատմել ժողովրդի նահատակության մանրամասնությունները:

Յետագայում խոտորջուրցի տարագրյալների վախճանի մասին բավականին ստույգ տեղեկություններ ստացվեցին գլխավորապես երեք աղբյուրներից.

- 1 - խոտորջուրցի Կառլոս Չախալյանից.
- 2 - Կարնեցի վերապրած կանանցից եւ
- 3 - խոտորջուրցի վաղեմի անդամական բարեկամ, Բիզէ քաղաքացի լավ, ազնիվ ու մարդասեր Արդուլլահ Մամուշ-Չաղեից:

Այդ երեք աղբյուրներն էլ հաստատում են հետեւյալը.

Օսմանյան պետությունը խոտորջուրցիների հետ վարվել է ճիշտ այնպես՝ ինչպես ամբողջ Արեւմտահայության հետ:

Այն է. Յայ ազգաբնակչությունը ամբողջովին, առանց սեռի, դասակարգի, դավանանքի, դիրքի տարբերության տեղահան անել եւ քշել դեպի Միջագետք: Ճանապարհին կտորել բոլոր 15 տարեկանից բարձր տղամարդկանց. իսկ մնացած երեխաներին ու կանանց քշել հարավ այնպիսի դժվարին տեղերով ու այնպիսի պայմաններում, որպեսզի նրանք այդ ճանապարհին ոչնչանան, ըստ որում բոլոր մահմեդականներին իրավունք էր վերապահվում վարվել այդ կանանց ու երեխաների հետ ըստ իրենց ցանկության ու քմահաճույքի՝ լլկել, առեւանգել, իբրեւ հարձ կամ ստրուկ պահել, նունիսկ սպանել՝ առանց որեւէ պատասխանատվության... Իսկ այդ բոլորից հետո, եթե էլի ողջ մնացածներ լինեն ու Միջագետք հասնեն, նրանց էլ այնտեղ ոչնչացնեն...

Յեղասպանության այս հրեշավոր ծրագիրը ամենայն դաժանությամբ ու բժախնդրությամբ հարյուր առ հարյուր գործադրվել է խտտորջուրցիների երկու քարավանների վերաբերմամբ, որի հետեւանքով համարյա ոչ մի խտտորջուրցի չվերապրեց շուրջ 7000 տարագրված ժողովրդից...

Հարկ չկա այստեղ մեջբերել հիշյալ աղբյուրների հաղորդածները խտտորջուրցիների կրած անլուր սարսափների մասին. դրանք համընդհանուր են եղել բոլոր տարագիրների համար եւ հանրահայտ են արդեն: Բայց անհրաժեշտ է այստեղ մեջբերել նրանց հաղորդածներից մի քանիսը, որոնք հատկապես վերաբերվում են խտտորջուրցիներին ու բնորոշ են նրանց...

Ընդհանրապես բոլորը, որոնք եղել են տարագրված խտտորջուրցի կանանց հետ, միաբերան հաստատում են, որ տարագրությունից մինչեւ նրա վերջին պահը, այսինքն խտտորջուրցիների բնաջնջումը:

Ո՛չ մի խտտորջուրցի կին կամ աղջիկ ո՛չ մի դեպքում եւ ո՛չ մի պայմանով չի համաձայվի առեւանգման կամ կամավոր կերպով մահմեդականներին անձնատուր լինել, կամ նրանց կին դառնալով մեկընդմիջտ ազատվել զարհուրելի տանջանքներից ու մահվան վտանգից...

Բոլոր այդպիսի դեպքերում, խտտորջուրցի կինը երբ այլեւս հնարավորություն չի ունեցել պաշտպանվելու եւ ազատվելու բռնացողնց, նա քաջաբար, անձնասպանությամբ վերջ է տվել իր կյանքին, որով փրկել է իր անաղարտությունն ու պատիվը...

ԵՎ ոչ մի խտտորջուրցի մայր, ոչ մի պայմանով եւ ոչ մի պարագայի իր երեխային չի հանձնել մահմեդականներին, որպես որդեգիր կամ ծառա, որով իսլամանալու գնով միայն փրկած պիտի լիներ իր զավակի կյանքը...

Ձարմանալի սառնասրտությամբ նա գերադեսել է իր երեխայի մահը իսլամանալուց... Գուցե սկզբունք ունենալով այն, որ իր երեխան իսլամանալով՝ կրկնակի մեղք է գործում իր ժողովրդի ու կրոնքի հանդեպ - մեկ՝ որ մի հայ պակասում է եւ երկրորդ՝ որ մի թուրք ավելանում է...

Ահա թե ինչպիսի նկարագրի ու սկզբունքի տեր են եղել այդ կիսագրագետ գեղջկուհիները...

Կարնեցի հայտնի դեղագործ Եղիշե Էֆենդիի կինը՝ տիկին Մանիկ Բաբայանը այն սակավաթիվ բախտավորներից մեկը եղավ, որոնց վիճակվեց վերապրել ու աշխարհին պատմել մեր ժողովրդի ահռելի եղեռնի մասին...

Տիկին Բաբայանը խտտորջուրցի տարադիրների մի խմբի հետ է եղել Երզնկայից մինչեւ Գըրգ-Դեօզ ու Օամսաթ եւ ականատես է եղել նրանց վերջնական ոչնչացման:

Թուրքիայի պարտությունից հետո տիկին Բաբայանը Հալեպից մի ընդարձակ նամակով պանդուխտ խտտորջուրցիներին տեղեկացնում էր, նրանց հարազատների տարագրության մեջ կրած սարսափների ու վախճանի մասին:

Այդ նամակը անցավ խոտորջուրցիների համարյա բոլոր գաղթավայրերով: Այն կարդացվեց նաեւ թիֆլիսաբնակ պանդուխտ խոտորջուրցիների ընդհանուր ժողովում, առաջ բերելով ընդհանուր լաց ու կոծ, սուգ...

Ահա այդ նամակի մի քանի բնորոշ հատվածները.

«... Խոտորջուրցի տղամարդիկ առողջ ու հաղթանդամ՝ շուրջիները արհամարող (խոսքը վերաբերվում է թուրք ժանդարմներին Ազվին), գլուխ իջեցնել չուզող, հպարտ, շքեղ հագնված, կյանքերի մեծ մասը Ռուսաստանում անցկացրած, ազատ վարժված՝չուզեցին դիվանագետ լինել, մոտ շփում հաստատելով դիրենք առաջնորդող ժանդարմների հետ... Ես գոնե մեկը չտեսա, որ զիծեր այդ բանին...»

«... Հոս հարկ կը համարեմ, ի դիմաց կարնեցի դժբախտ կանանց, շնորհակալություններս հայտնել այն ազնիվ, ազգասեր խոտորջուրցի երիտասարդներուն, որոնք իրենց կյանքը վտանգի ենթարկելով մութին մեջ օգնության հասան մեզ... Ապա թե ոչ՝ հոն, այդ դժնդակ կացության մեջ թուրքերը մութեն օգտվելով կոչնչացնեին մեզ եւ ավարի կու տային ինչքերնիս:»

«... Խոտորջուրցիներու այդ մարդկանց ալ՝ Մալաթիա տանինք ըսելով խափած, տարած են Ֆըրընճըլար գյուղը, խան մը լեցուցած են ու առանձին-առանձին վրանին կողոպտած ու մեկիկ մեկիկ մորթելով գետը նետած են...»

«Սեպտեմբերի 7-ին Ֆըրընճըլարեն ճամբար եկանք: Շատ դժնդակ ճամբարներե վեր պիտի մազլցեինք. թերեւս մինչեւ այդ ատեն արծիվներն իսկ ոտք չէին դրած այդ դժվարին վերելքներուն մեջ... Կարնեցիներս ավելի նենգություն կրեցինք քան թե խոտորջուրցիները. անոնք ամենքն ալ չարքաշ, առնացած նկարագրով կիներ էին, առանց տարիքի տարբերության: Կը տեսնեիր դեռ մանկտի, 15 տարեկան աղջիկ մը արյան քրտինքներու մեջ, իր ունեցած կանացի շնորհներուն հակառակ, ուժեղ, խոժոռ դեմքով դեռ կռնակին վրա ունի 30 օխա բեռ, բայց կառհամարե նորեն ճամբու դժվարությունները. կը տեսնես իրմե քանի մը քայլ անդին ուրիշ երիտասարդ հարս մը, որ թանկագին ավանդը սրտահատոր՝ օրօրոցով միասին շալակած, վրան ալ դեռ ունեցած գույքերը՝ կը քալե...»

«... Ով անհողդող կամքով բարոյալից կլիներ, ձեր սուրբ հիշատակը անարատ մնաց... ԵՎ թող անջնջելի պահեն իրենց սրտերու մեջ ձեր հեռավոր պանդուխտները...»

«... Երեւակայեցեք, որ աշխարհիկ կյանքին նվիրված կանայք երբեք չուզեցին ապրիլ գոնե իրենց հեռավորները գտնելու փափագով... Ըստ իս՝ սխալ ըմբռնում է սա... Խոտորջուրցի կանայք ոչ ինքզինքին եւ ոչ ալ զավակնին օտար հարկի մը տակ չուզեցին տեղավորել, որովհետեւ իսլամանար պետք էր... Սա իմաստասիրական հարց մըն է, որ ապագայի խորհրդածության կը թողում...»

Տիկին Բաբայանը հայտնելով որ բոլոր խոտորջուրցի դիրները բնաջնջված են, իր նամակը այսպես է վերջանում.

«Ուրեմն դժբախտ հայրենակից խոտորջուրցիներ, երկնային մխիթարություն կը հայցեմ ձեզի համար: Ստիպված եմ ճշմարտությունը հայտնել ձեր սիրելիներուն մասին, որ ի զուր տեղը չհուսաք... Անգուժ ճակատագիրը դառն կերպով հարուածած է ձեզ՝ անդառնալիորեն գատած անոնք ձեզմէ...»

Կառլոս Չախալյանը խոտորջուրցի Միջինթալ Գյուղացի է, բայց եղեռնի ժամանակ գտնվելով Կարինում (սովորում էր Մխիթարյանների վարժարանում) տարադրվել է կարնեցիների 8000 հոգուց բաղկացած երկրորդ կարավանի հետ:

Նա շատ անգամներ ստույգ մահից զարմանահրաշ բախտավորությամբ փրկվելով ողջ մնացած տասնյակ այլ մարդկանց հետ հասնում է Ռաքթա...

Տարագրության ամբողջ ճանապարհին Կ.Չախալյանը ակտիվ կերպով (իհարկե, որքան կարող էին այս թույլ տալ տարագիր հայի պայմանները) հետաքրքրվել է խոտորջուրցի տարագիրների վիճակով, զանազան փնտոտուքներ է կատարել, հույս ունենալով մի լուր ստանալ իր ծնողների եւ հայրենակիցների մասին:

Ստույգ իմանալով, որ խոտորջուրցիների կարավանները հասել են Ռիրֆայի շրջանը, նա ձգտում է մի կերպ ընկնել այնտեղ...

Այդ նրան հաջողվում է միայն 1916 թվ. աշնանը:

Նրան ու երեք ուրիշ հայ տղաների, որպես իշապանների, Ռաքթայից վերցնում են Օմար եւ Շեվքեթ ժանդարմները 150 էշեր Ռիրֆա տեղափոխելու համար: Ռիրֆայում օգտվելով իրենց հսկող ժանդարմների անփութությունից, հայ տղաները անհետանում են քաղաքի բազմաթիվ ծուռ ու մուռ փողոցներում...

Կ. Չախալյանը որպես վանեցի թուրք մուհաճիր (գաղթական) ձեւանալով Ռիրֆայում միառժամանակ ազատ շրջում է ու փնտոտուքներ կատարում...

-Մի օր հանկարծ հանդիպեցի, - պատմում է Կ.Չախալյանը, - ինձ լավ ծանոթ կարնեցի վաճառական Հալեբյան Արմենակին, որը իր ամբողջ ընտանիքով, 40 այլ ընտանիքների հետ առերես իսլամություն ընդունելով, որպես կարեւոր արհեստավոր փրկվել էր ու այդ ճամանակ աշխատում էր Ռիրֆայում, որպես արհեստավոր: Նրա նոր անունը Ռիզա էֆենդի էր: Նա ոչ միայն ինձ չմատնեց, այլ շատ սիրով օգնեց իմ փնտոտուքների մեջ: Նա հաջողացրեց իր տան մեջ, իր կնոջ՝ Աստղիկի, զոքանչ Ազապիի եւ աներծակ Հակոբի ներկայությամբ տեսակցություն ունենալ կարնեցի Փախրջու կնոջ՝ Շողակաթի հետ, որը միակ կենդանի մնացած վկան էր այն մեծ ողբերգության, որին զոհ էին գնացել խոտորջուրցի, Կարինի եւ այլ հայկական գավառների միացյալ կարավանի վերջին բեկորները...

Ըստ Կ. Չախալյանի գրավոր հուշերի, տիկին Շողակաթը պատմել է հետեւյալը.

«... Սամսաթի մոտերքը, երբ ալ ոչ մեկ այր մարդ չէր մնացել մեր կարավան մեջ, առեւանգման ու բռնաբարման նպատակով

հարձակումները սաստկացան... Օգտվելով մեզ պաշտպանելու պաշտոն ունեցող ժանդարմներու բարիացակամությունից՝ շրջակա մահմեդական գյուղերեն հաճախակի կու գային աղջիկ կամ դեռատի հարս քաշելու, որոնց եթե կնության կամ հարձի տեղ չէին տաներ՝ ուրեմն լվելով տանջամահ կնեին...

Բայց խոտորջուրցի կիներն ու աղջիկներն անպետմելի քաջությամբ ու համարձակությամբ կը դիմադրեին ու ինքդիներին կը պաշտպանեին. կը մեռնեին, բայց երբեք անձնատուր չէին ըլլար թուրքերուն:

«Բայց այդ զարհուրելի օրերուն իսկ, կը գտնուէին բարեսիրտ մահմեդականներ, որոնք մարդասիրութենէ, անզավակութենէ կամ այլ առիթ զրդված՝ կու գային տարադիրներու մոտ խաղաղությամբ, ի հարկէ ժանդարմներու հետ պայմանավորվելով, անոնց չնչին «պաղ շիշ» մը տալով, եւ կուզեին աղջիկ մը, մանչ մը տանիլ, նույնիսկ դրամ առաջարկելով մերձավորներուն: Համաձայնիլը կը նշանակեր կյանք, ազատություն, հաց եւ վերջ դժոխային չարչարանաց...

Սակայն խոտորջուրցի կինը երբեք չօգտվեց նման առաջարկներից ան մինչեւ վերջ գերադասեց մահը ուրացումէ...»

«...Իսկ ամենաբնուշն ու աննախընթացը, միեւնույն ատեն ամենասքանչելի ու սահմուկեցուցիչը կատարվեցավ մեկ անգամ լուսաբացին, երբ ավելի բազմամարդ հարձակման մը պահուն, ժանդարմները բացեիբաց ասպարեզ տվին կարավանին վրա հարձակվող գիշահիչներու ոհմակին, նույնիսկ սատարեցին անոնց...

«Այդ անելանելի պահին, մեկ ալ տեսանք խոտորջուրցի դեռատի կանայք ու աղջիկները, բոլոր եքեան մի քանի հարյուր հոգի միասին, կարծես ի վերուստ իջած աստվածային հրամանով, անշուշտ նախապես պայմանավորված ուխտով, մեկ անդամեն, իրար կանչելով, մեկզմեկու ձեռքերէ բռնած, մայրերը իրենց մանուկները կրծքերնուն կամ կռնակին կապած՝ թռան, սլացան, ու մեկ ակնթարթի մեջ ինքզինքին նետեցին Եփրատի ալիքներուն մեջ...»

4. Չախալյանը իր կողմից այսպես է խորհրդածում իր հուշերում.

«Կանանց կոլեկտիվ անձնասպանության եզակի դեպք, որպիսին դեռ չի արձանագրված պատմության մեջ... Կը խորհիմ թե խոտորջուրի կանանց այս գերմարդկային ուժն ու կորովը՝ հանուն իրենց սրբազնացրած բարոյական ու հոգեկան սկզբունքներու անաղարտության՝ հաղթահարելու ամեն տեսակի մարմնական տանջանք ու զրկեաք, նույնիսկ մահը, ուսկիտց կու գա...

«Արդյուտք կրոնական նախապաշարումներից, հանդերձյալ կյանքի գոյության խոր հավատքից, թետ այդ՝ հայ ցեղի բնածին կենսունակության դարավոր ակունքներից կու գար ու այդպես առատաբուխ հոսում էր մեր կանանց հզոր կամքի մեջ, բովանդակ էության մեջ եւ դրանով է, որ հայ ժողովուրդը աննվաճ է մնացել, ապրել է ու հասել մեր լուսավոր օրերին ու պիտի հարատեւի հավիտյանս հավիտենրց»:

Ահա թե ինչպիսի ընտանիքներ էին կորցրել պանդուխտ խոտորջուրցիները եւ ինչու այնպես դառնաղի մորմոքում էր նրանց հոգին, ինչու վրեժի զգացումով լցված էր նրանց սիրտը...

Սամսաթից նրանց կարավանը քշում է դեպի Ուրֆա, այնտեղից էլ դեպի աստվածաշնչական Խառան քաղաքի ուղղությամբ...

Այդ ճանապարհին նրանց կարավանը դժբախտություն է ունենում ՅԱՆԴԻՊԵԼՈՒ ՋԱՄԱԼ ՓԱՇԱՅԻՆ:

Այդ ժամանակը համընկնում է Ուրֆայի հայ կանանց նշանավոր ինքնապաշտպանության ժամանակներին, որը, ինչպես հայտնի է, կատաղեցրել էր օսմանյան բանակի հրամանատարությանը: Պիտի ենթադրել, որ Ջեմալը այդ առնչությամբ էլ գնում էր դեպի Ուրֆա... (Ըստ տվյալների նա մի օր է եղել Ուրֆայում):

- Մեր կարավանին կեցած տեղը հանկարծ երեւացավ Ջեմալ փաշան իր շքախմբով, - տիկին Շողոկաթի հաղորդածները այսպես է վերապատմում իր հուշերում Կ. Չախալյանը - Սուրիոյ ասածոյ, Ջեմալ փաշայի երեւալով մեր կարավանի վրայով հույսի նշույլ մը սավառնեցավ... Որովհետեւ մենք լսած էինք, որ Ջեմալը տարակարծիք է Թալեաթի ու Էնվերի հետ եւ դեպի հայերը բարյացակամ է...

- Ինչ կասկած,- ասում է Կ. Չախալյանը - որ ամբողջ Հարավային ռազմաճակատի գերագույն հրամանատարի ու դիկտատորի մի խոսքը, նրա մատի մի շարժումը կարող էր հազարավոր հայ կանանց ու մանուկներին կյանք շնորհել...

Մի խումբ կանայք խոտհորջուրցի Մարուզ Հանըմի առաջնորդությամբ ծնկաչոք դիմում են ամենագոր փաշային, աղերսելով գթալ իրենց, թույլ տալ զոհե առժամանակ մնալ այդտեղ, հանգստանալ եւ պաշտպանվել խուժանի հարձակումներից...

-Գթացեք, փաշա, վերեւ Աստված, ներքեւ դուք... Գթացեք, վասնզի մեր մեջ այլեւս այդ մարդ չկա, մնացել ենք միայն մանկտիք ու թժվառ կանայք...

Ջեմալ փաշան ձեռքով իր կարծ մորուքի հետ խաղալով աչքե կանցնե իր առջեւ բազկատարած չորացած աղաչավոր կանանց ու մանուկներին եւ սպառնազին կը գոչե.

- Օձին էգն ու որձը չըլլար... Հայ կանայք ավելի վտանգավոր են քան այրերը...- եւ ձեռքով կարավանը քշելու հրաման կարձակե...

Այնուտետեւ Մարուզ Հանըմ կմախքացած բռունցքները երկակացնելով փաշայի կողմը, կանիժե ասելով.

- Փաշա~, փաշա~, քեզանից մեծ` Աստված կա... Մեր զավակները մեռած չեն, անոնք Ռուսիա կգտնվին, ու օր մը անոնց պատասխան հիտի տաս...- ապա դիմելով երկնքին, անհուն հուսահատության մեջ, այսպես կգոչե.

- Օ~, Տեր իմ, եթե դուն կաս` խոնարհեցու զունկն քո եւ ակն քո եւ լուր ու տես~...

Դրանից անմիջապես հետո կարավանը կրկնապատկված վայրագությամբ քշել են առաջ...

- Քրդական Թթիչ գյուղը չհասած - պատմել է տիկին Շողկաթը նորեն ինձ մոտեցավ մեզ ուղեկցող երիտասարդ ժանդարման (որը միշտ բարիացական էր եղել մեր հանդէպ եւ ամբողջ ճանապարհին շարունակ ինձ դիմել էր, որ իմ աղջկան հոժարութեամբ իրեն կնութեան տալ, խոստանալով փրկել նաեւ իմ կյանքը եւ միշտ էլ մերժվել էր իմ կողմից) եւ հայտնեց, որ կարավանը իր վերջին ժամերը կապրէ... Որ հրամանը շատ խիստ է... Ամենքը պիտի ոչնչանան անխտիր... մեղք է, մի համառեք...

-Ես- շարունակել է տիկին Շողկաթը- վերհիշելով կարինից մինչեւ այդտեղ մեր քաշած սարսափները եւ նայելով իմ մինուճար, գեղեցկուհի աղջկան եւ պատկերացնելով, որ վերջ ի վերջ առանց իմ համաձայնութեամբ էլ աղջիկս կարող է առեւանգվել այդ ժանդարմայի կողմից կամ այլ թուրքի կողմից, անհուն ցավոք ստիպված աղա տալ իմ համաձայնությունը... ժանդարման պահեց իր խոստումը եւ Թթիչ քրդական գյուղում ինձ ու աղջկանս աննկատելիորեն անջատելով կարավանէն, մի քրդի ընտանիքի մոտ պահ տվավ մեզ...

Կես գիշերը անց էր, երբ ժանդարմաները բոլորը վերադարձան Թթիչ գյուղ... Ինացանք, որ մեր կարավանը ամբողջովին ոչնչացված է...

Վաղ առավոտյան, երբ ես ու աղջիկս քրդի կոնածեւ հյուղակի առաջ լվացվում էինք, արեւելքից գյուղ մտան լալով ու ողբալով, արյունաշաղաղ շապիկներով 11 վիրավոր խոտորջուրցի կանայք... ժանդարմաները այդ թշուառներին անմիջապէս օղակելով դուրս քշեցին... Քիչ հետո լսվեց հրացանների պայթումները... Ո՛ր ժանդարմաները ինքնագոհ վերադարձան գյուղ: Ջենալի հրամանը լիով կատարված էր:

4. Չախալյանին չի հաջողվում երկար թաքնվել վանեցի մուհաճիրի անվան տակ: Էսքի շեհիրցի թրքացած Վահանը մատնում է նրան:

Բանտում Չախալյանը հանդիպում է Ռիֆայի հայ կանանց հերոսական ինքնապաշտպանության հռչակավոր ղեկավար տիկին Եղիսաբեթ Եռթնեղբայրյանին ու նրա երկու զինակցուհիներին, որոնց օսմանյան ռազմական դատարանը 101 տարվա բանտարկության է դատապարտված է եղել: Մի բարեհոգի հարուստ թուրք հանձն է առած եղել հոգալու հայ հերոսուհիների սնունդը մինչեւ նրանց կյանքի վերջը: Ռիիչ 15 հերոսուհու էլ 101 ական տարվա վճիռ են տվել, սակայն նրանց փոխադրել են Հալեբի բանտը...

Տիկին Եղիսաբեթը եւ իր ընկերուհիները հայտնել են, որ իրենք էլ լսել են կարմիր գոգնոցավորների նահատակման մասին: Նրանց իմացածը մոտավորապէս համընկնում է մեզ արդեն ծանոթ տիկին Շողկաթի հաղորդածին, այնպէս որ կրկնելու կարիք չկա...

Արդուլլահ Մամուշ-Չաղեն բնիկ ռիզա քաղաքացի, ազգությամբ լազ, սկսած անցյալ դարի 90-ական թվականներից մինչեւ իր կյանքիտ վերջը նա մնաց խոտորջուրցիների անփոխարինելի,

ազնիվ ու անդավաճան բարեկամը: Նրա հայասիրության մասին գրել է դրվատանքով թուրք կոմունիստ գրող Սարահետտին Ալին:

Ազնիվ Մամուշ-Չաղեն նախ խոտորջուրցիների 1915 թվին ուղեկցեց ինչքան որ այդ հնարավոր եղավ, տարադրության ճանապարհին բազում օգուտներ, նյութական ու բարոյական օժանդակություն ցույց տալով մեր ժողովրդին:

Երկու անգամ նա մասնակցեց խոտորջուրի տարադիր ժողովրդի փնտոտունքին: Առաջին անգամ նա մասնակցեց «տայք» միության խուզարկու խմբին, նրա հետ հասավ Հալեբ, սակայն արաբ հայրենասերները արգելակեցին նրա գործունեությունը արաբական աշխարհում: Հայրենասերները չհավատացին, որ մի թուրք կարող է զբաղվել հայահավաքման ազնիվ գործով...

Նրանք կասկածել էին, որ Մամուշ-Չաղեն Իթթիհատ գաղտնի գործակալն է...

Երկրորդ անգամ նա իր փնտոտունքները սկսեց թիֆլիսաբնակ խոտորջուրցիների նյութական օժանդակությամբ ու նրանց հանձնարարությամբ: Խոտորջուրցի պանդուխտները շատ էին ցանկանում, որ գոնե մի հոգի պատմի իրենց հարազատների նահատակման մասին, որ գոնե մի հոգի հպատմի իրենց հարազատների նահատակման մասին մանրամասնություններ՝ թե ով որտեղ էլ ինչպիսի մահով նահատակվեց...

1920 թվին Մամուշ-Չաղեն խոտորջուրցի տարադիրների հետքերով անցան Երզնկայից Կամախ, Ակն, Մալաթիա, Դերսիմ, Սամսա, Ռիրֆա, Թթիչ:

Լինելով մահմեդական, ունենալով նյութական բավարար միջոցներ, անվախ ու ձեռներեց Մամուշ-Չաղեն լիակատար հնարավորություն ունեցավ ծավալել լայն փնտոտունքներ: Երկար ժամանակ նա խուզարկություն կատարեց հիշյալ վայրերում, մեծ գումար խոստացավ ամեն մի կարմիր գոգնոցավորի համար, սակայն նրա բոլոր ջանքերը ապարդյուն անցան... Ոչ մի խոտորջուրցի չգտնվեց:

Շատ տեղերում նրան խորհուրդ էին տվել.

«Կարմիր գոգնոցավոր չփնտրեք, նրանք չկան... Մեռան, բայց անձնատուր չեղան, չիսլամացան...»

Թթիչ գյուղից դեպի արեւելք նրան ցույց էին տվել վերջին կարավանի նահատակման վայրը, փռված բազմաթիվ զանգերով ու ոսկորներով...

Մամուշ-Չաղեի հավաքած տեղեկությունները նույնպես հանրնկնում են Կ.Չախալյանի եւ մյուսների հաղորդածներին, այնպես որ չենք կրկնում: Նա էլ Ռիրֆայում լսել է Չեմալի եւ տարադիրների հանդիպման մասին, Մարուզ Հանըմի դիմումի մասին... Կանանց հավաքական ինքնասպանության մասին եւ այլն...

Այդ երկար շրջագայությունից հատո, Մամուշ-Չաղեն ընկճված սրտով, ձեռնունայն վերադառնալով Թիֆլիս իր տեսածն ու լսածը, իր տպավորությունները ամենայն մանրամասնությամբ պատմեց խոտորջուրցիներին: Նա իր զգայացուց պատմություններով

պանդուխտների մեջ առաջացնում էր ոչ միայն վիշտ եւ սուգ, այլեւ բորբոքում էր վրեժի ու հատուցման զգացումները...

Պետք է չմոռանալ, որ Մամուշ-Ձաղեն խտորջուրցիների մեջ վայելում էր մեծ հեղինակություն ու հարգանք: Նրա խոսքերը ընկալում էին ամենայն լրջությամբ...

-Ափսոս ծեր կանանց- կշտամբանքով ասում էր նա- դուք բոլորովին արժանի չէք նրանց... Դուք տղամարդ չէք...

Ծերունազարդ լաղի ուղեղում չէր տեղավորվում այն միտքը, որ մարդ հարազատների արյան վրեժը չլուծած, կարող է հանգիստ նստել Թիֆլիսում, առետուր անել... Հետաքրքիր է, որ Մամուշ-Ձաղեն չէր փախցնում պատմելու նաեւ Ռիքայի կանանց հերոսությունների մասին եւ պատմում էր մեծ պաթոսով եւ ի վերջո եզրակացնում էր.

-Ամբողջ Հայ ժողովուրդը ահա այդպես էր վարվելու...

” ” ”

Այդ բոլորից հետո պանդուխտ խտորջուրցիների մեջ այն հաստատա համոզմունքն էր գոյացել, Ձեմալ փաշան ոչ միայն ընդհանրապես արեւմտահայ ժողովրդի գլխավոր դահճապետներից մեկն է եղել, այլեւ իրենց՝ խտորջուրցիների տարադրված հարազատների Ռիքա հասած բեկորների ոչնչացման ԱՆՄԻՋԱԿԱՆ ԴԱՅԻՃՆ Է ՀԱՆԴԻՍԱՑԵԼ... Նրանք համոզված էին, որ եթե Ձեմալը չհանդիպեր խտորջուրցիների կարավանին, ուրեմն նրանք գոնե մասամբ, ողջ կմնային ու կվերադառնային...

Դրանով է բացատրվում երբեմնի անշառ ու կրավոռական թիֆլիսաբնակ խտորջուրցիների ցուցաբերած անհավատալի եռանդը, նրանց բացառիկ համարձակությունը Ձեմալ փաշայի սպանության կազմակերպման գործում:

Հետագայում, երբ Ձեմալի սպանության պարագաները հայտնի դարձան ոստիկանության եւ իսկական սպանողները հայտնվեցին՝ Հայաստանի ՆԳՄԿ-ի (Մուղղուտու) տեղակալ Վանիա Գեորգովը (որը 1922, որպես ՁակՉեկայի պատասխանատու աշխատակից բազմաթիվ անտեղի ձերբակալություններ էր կատարել եւ շատերի գործերն էր վարել եւ հետաքննություններ արե) երբ իրեն հիշեցնում էին այն ժամանակվա Չեկայի գործակալների ու աշխատակիցների լիակատար անշնորհությունն ու անճարակությունը, որի հետեւանքով միայն բոլորովին անմեղ մարդիկ տուժեցին, այսպես էր բացատրում իրենց ձախողումը Ձեմալի սպանողներին հայտնաբերելու գործում.

-Ուտմ մտքից կանցներ, որ այդ տարեց «փռնչիները», այդ անշառ ու թուլամորթ մարդիկ երբեւիցե ընդունակ կլինեն այդպիսի լուրջ եւ վտանգավոր գործի՝ քաղաքական տեռորի կազմակերպմանը... Փաշայի սպանողներին մենք փնտրում ենք բոլորովին այլ ուղղությամբ, այլ խավարում... Իսկ Արտաշեսը ու Պետրոսը Թիֆլիսում նորեկներ էին եւ նույնիսկ չէին գրանցված... Թիֆլիսաբնակ խտորջուրցիները ընդհանրապես որպես ավանդականորեն ապաքաղաքական մարդիկ՝ մեր տեսադաշտից բոլորովին դուրս էին մնացել...

Կառույց Չախալյանը շատ անգամներ ուղղակի մահվան հետ քսվելով վեջապես մի օր հաջողացնում է Թուրքական իշխանությունների ձեռքից միանգամ ընդմիջտ ազատվել... Նա Ռաքքայից փախչում է դեպի անապատի ներսերը, վաչկատուն բեգուհների մոտ եւ որպես արաբ, Ապուտ էլ Աճիլի անունով ապրում նրանց մեջ մինչեւ Թուրքիայի պարտությունը, որից հետո գալիս է Հալեպ, որտեղ գտնում է Տայոց Հայրենակցական միության խուզարկու խմբի անդամներին ու գրկիցներին, որոնց օժանդակությամբ՝ Կ. Պոլսի վրայով գալիս է Կովկաս:

Նա իր հուշերում գրում է.

«1919 թ. Հունիսին հասա Բաթում: Պոլիս ժամանած Անդրանիկի զինվորներից տեղեկացել էի, որ իմ մանկության ընկեր ու ազգական Արտաշես Գեւորգյանը այնտեղ է ու սրտատրոփ սպասում էի հանդիպման տենչալի բուպեներին...»

«Արեւային ջերմ երեկո էր. Հենց որ նավին կայցրած աստիճաններից իջա՝ գրկախառնվեցի բաթումաբնակ խոտորջուրցիների հետ, որոնք ամբողջովին եկել էին ինձ դիմավորելու... Լալով փաթաթվեցի Արտաշեսին ու երկար լացից խեղդվելով չէինք կարողանում խոսել...»

«Արտաշեսի հետ «Արմենիա» հյուրանոցում ապրում էր նաեւ Քիթայրոզ Պետրոսը (Պ. Տեր Պողոսյան): Մինչեւ այսօր ոչ մեկս չկարողացանք այք փակել... Ես մինչեւ լույս պատմեցի Հայ ժողովրդի անցած զարհուրելի դողդոթան... Մեր սուրբ ժողովրդի անցած զարհուրելի դողդոթան... Մեր սուրբ ժողովրդի մարտիրոսությունը... Ես պատմեցի այն ամենը ինչ ինձ հայտնի էր մեր ծննդավայրի տարադրության ու նահատակության մասին, պատմեցի առանց վերապահումների ամբողջ ճշմարտությունը... Մեծ եղեռնից Վերապրած առաջին ղուժկանն էի ես, որ ականատես էի եղած մեր ժողովրդի աշխարհասասան ողբերգության ու եյժմ նրա մասին կենդանի խոսք էի ասում...»

«Մեր հայրենակցները մինչեւ լույս անհուն տխրությամբ, ախ ու վախով, ոմանք լացով, ոմանք ցասումնալից բացականչություններով լսեցին ինձ ու ի վերջո կրկին ու կրկին հարց էին տալիս.

«- Ո՞րքեմն ոչ ոք չկա... Ոչ ոք չվերապրեց...»

«- Ոչ ոք...- ստիպված էի ասել սարսափելի ճշմարտությունը...եւ ոչ մի հույս...»

«Այդպես անցավ գիշերը... Առավոտյան լուսաբացին Արտաշեսը, Պետրոսը եւ ես գնացինք ծովափը... ծովափին կանգնած լուռ նայում էինք դեպի հեռուն, դեպի ճորոխ գետի կողմը, դեպի մեր ամայացած ծննդավայրի լեռները... Դեպի արյունուռուտ Թուրքիան... Ես զգում էի Արտաշեսի ու Պետրոսի ալեկոծված հոգիների տանջալից ապրումները... Մի գիշերվա մեջ կարծես ծերացել էին նրանք, ընկճվել ու խամրել այդ վառվռուն երիտասարդները, որոնք արիության ու խիզախության սքանչելի օրինակներ էին ցույց տվել Թուրքերի դեմ մղած մարտերում... Արտաշեսը՝ Ջորավար Անդրանիկի

դրոշի տակ, Պետրոսը պաշարված խոտորջուրի ինքնապաշտպանության դիրքերում...

«Ի վերջո սկսեցին խոսել: Երկունքն էլ միեւնույն միտքն էր արտահայտում, թեւ տարբեր խոսքերով, այլ ձեւով.

«- Այսուհետեւ ապրել միմիայն մեր ժողովրդին սպանող դահճապեններից վրիժառու լինելու համար... Այլ կյանքը՝ թող հարամ լինի մեզ համար...

«Բաթումից ես գնացի Թիֆլիս, որտեղ ապրում էին հարյուրավոր պանդուխտ խոտորջուրցիներ: Ես եղա նրանց բոլորի մոտ եւ պատմեցի ամբողջ ճշմարտությունը նրանց հարազատների բնաջնջման մասին... Ես վերապրելով՝ իմ սրբազան միսիան էի համարում հարյուր հազարավոր մեր նահատակների վերջին խոսքը. վերջին իղձը հասցնել դեռ ապրող շարությանը...

«Ես գոհունակությամբ տեսնում էի, որ իմ անպաճույճ, բայց ճշմարիտ խոսքերը ինչպիսի ազդեցություն են թողնում հայրենակիցների վրա, ինչպիսի արդար ցասումով ու զայրուքով բռնկվում են նրանց հոգիներ... Ինչպիսի վրեժխնդրության ու հատուցումի իղձով լցվում են նրանց սրտերը դեպի Յայ ճողովրդի դահճապենները՝ Ենվերը, Թալեաթը եւ, մանավանդ, Ջենալը...

«Թիֆլիսից հեիո ես շրջվեցի Կովկասի, Ուկրաինայի եւ Չարավային Ռուսաստանի բոլոր այն քաղաքները ու ավանները, որտեղ ապրում էին պանդուխտ հայրենակիցներ ու ամեն տեղ պատմեցի իմ տեսածն ու լսածը Մեծ Եղեռնի մասին... Ես անդադար ու ամեն տեղ պատմեցի Թուրքերի բարբարոսությունների ու մեր ժողովրդի նահատակման մասին, պատմեցի բոլորին, բոլորին եւ հայերին եւ ուրիշ ազգերին... ԵՎ երբ 1922թ. ամռանը վերադառնում էի Թիֆլիս, հարկովում իմացա, որ Ջենալը սպանված ց Թիֆլիսում: Ինձ հրճվանքի չափը չկար... Ես շտապեցի Թիֆլիս ու այնտեղ անհուն բերկրանքով տեղեկացա, որ այդ արյունակալ դահճապետի անարգ գոյությանը վերջ են տվել Արտաշեսն ու Պետրոսը:

«Անհուն երախտագիտությամբ ես գրկեցի նրանց ու շնորհակալության ու փառաբանման խոսքեր ասացի նրանց...

«Այդ պահին ես այնպես կենդանի վերապրեցի մեր անտեր ու անտիրական ժողովրդի անցած հազարասարսափ Գողգոթայան Կարինից մինչեւ Տեր Ջոր, մինչեւ արեւակեզ անապատը անծայրածիր...

«Ո՛ր ինձ թվաց թե այդ պահին ինձ հետ են Ջենալի հարյուր հազարավոր զոհերը, որոնք ես գիտեմ, (ես ականատես վկան եմ) անհիծելով Ջենալին ու նրա արբանյակներին նահատակվեցին՝ մեռնող իրենց վերջին հայացքը վերջին անգամ հառելով դեպի հյուսիս որտեղից շարունակ սպասել էին փրկության ու հատուցման:

«Ինձ թվաց թե հոշոտված հարյուր հազարավոր Յայերի անթաղ ու անշիրիմ ոսկորները, որ ցրիվ ցրիվ փռված հարավի անծայրածիր անապատների ու ավազների վրա, հատուցման այդ հրաշալի ժամին էին սպասել՝ այժմ մարմին ու արյուն առած ահա եկել ինձ հետ

մեկտեղ ողջագուրվում են այդ հերոսների հետ ու շնորհակալության ջերմաջերմ խոսքերը մրմնջում երկու վրեժխնդիր հայրորդներին...»

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵՑ ՈՒ ԻՐԱԳՈՐԾՎԵՑ ՁԵՄԱԼ ՓԱՇՏՅՈՒՆՆԵՐ

Քենալական Թուրքիայի Թիֆլիսի Հյուսիսատոսարանի գինվորական կցորդ Նուրետտին բեյը ապրում էր Վելիամինովսկայա փողոցի թիվ 22 շենքում, իսկ նրա կողքի թիվ 20 շենքում տեղավորված էր խոտորջուրցի Պողոս Պողոսյանի փունջը:

Նուրետտին բեյի ընտանիքի ու Պողոսյանի միջև ստեղծվել էր բարիդրացական, այսպես ասած՝ համաշարիական փոխհարաբերություններ: Ամեն առավոտ Նուրետտին բեյը, կամ իր կինը հաց էին գնում Պողոսյանից եւ, որպես համաերկրացիներ, իրար քեֆ ու հալ հարցնում, նորություններ հաղորդում...

Պողոսյանը լինելով անգերազանցելի քաղաքավարի, հաճոյախոս ու հաճոյակատար հացավաճառ, հենց առաջին հանդիպումից գրավել էր Նուրետտին բեյի, մանավանդ նրա կնոջ համակրանքն ու վստահությունը: Պողոսյանը ամենայն պատրաստակամությամբ ընդառաջում էր նրանցառտնին պետքերին, տիկնոջ համար թավա կամ թիշուրմա էր թխում, նույնիսկ խորհուրդներով օգնում էր նրանց զանազան գնումներ անելիս...

Ձենալ փաշայի Թիֆլիս ժամանելու երկրորդ օրը, Նուրետտին բեյի կինը հանապազօրյա հացը դնելիս, որպես նորություն հայտնում է, որ վսեմաշուք Ձենալ փաշան ժամանել է Թիֆլիս եւ մի քանի օրից մեկնելու է Անգարա...

Լսելով Ձենալ փաշայի անունը՝ Պողոսյանը, ինչպես ասում է, լեզուն կծում է, սակայն առերես ոչինչ ցույց չի տալիս, իսկ երբ տիկինը հեռանում է՝ գոգնոցը մի կողմ ց նետում եւ դուրս գալիս փռից... Նա գնում է իր գիտցած մի քանի վստահելի ու հեղինակավոր հայրենակիցների մոտ, պատմում է իր լսած կարեւոր նորությունը: Վերջիններն էլ իրենց հերթին լուրը հաղորդում են էլի մի քանի վստահելի հայրենակցի, որով շուտով թիֆլիսաբնակ խոտորջուրցիների մեջ տարածվում է այն լուրը, որ իրենց տարադիր ըիտանիքների բեկորները ոչնչացնող Ձենալ փաշան գտնվում է Թիֆլիսում...

Արտաշես Գեւորգյանը, որ դոնբասաբնակ պանդուխտ խոտորջուրցիների հանձնարարությամբ գնում էր Հայաստան նոր գյուղ հիմնելու, Հուլիսի 13-ին հասել էր Թիֆլիս եւ հյուր էր եղել Պուշկինսկայա փողոց թիվ 11, իր ազգական Գեւորգյանների փռում: Նույն տան բակում ապրում էր խոտորջուրցի Օգոս Սչանյանը, որը Արտաշեսի ժամանելու լուրն առնելու պես կանչում է իր բնակարանը եւ գաղտնաբար հայտնում Ձենալի Թիֆլիսում գտնվելու մասին: Այդ լինում է Ձենալ փաշայի Թիֆլիս գնալու երրորդ օրը: Պատրոս Տեր-Պողոսյանը նույն օրը իմանալով Արտաշեսի գալուստը շտապում է նրա մոտ: Հանդիպումը տեղի է ունենում Պուշկինյան պուրակում: Պետրոսը նույնպես նոր էր եկել Դոնբասից: Նա էլ իմացել էր Ձենալի Թիֆլիսում լինելը: Դեռ հեռվից երկու երկու ընկերները դեմքի ուրախ

արտահայտությամբ հասկացնում էին իրար ուրախառիթ նորությունը...

Ջերմագին ողջագուրվելով Արտաշեսը ասում է.

- Գազանը կարծես ջուխտ ոտքով ճիճեխն է ընկնում...

- Մի ասիլ,- ավելի պատեհ առիթ չէինք կարող սպասել...

Եվ երկու ընկերները, որոնք դեռ 1919 թվին Բաթումում Կառլոս Չախալյանին հանդիպելուց հետո շարունակ մտորել էին մի օր Ջեմալի հետ հաշվեհարդար կատարելու մասին, այժմ հաղթական տրամադրության մեջ էին...

Նրանք նստում են մի թափուր նստարանի վրա եւ ծրագրում՝ ինչպես գլուխ բերել Ջեմալի սպանությունը:

Թեթեւ ու մոտավոր ուրվագիծ կազմելուց հետո նրանք գնում են Կառլոս Չախալյանի եղբոր՝ Գրիգորի մոտ, որը աշխատում էր Պողոսյանի փռում եւ ապրում էր վերոհիշյալ Նուրետտին բեյի ապրած տան մեջ համարյա միեւնույն բնակարանում: Գրիգորի եւ Նուրետտին բեյի ննջասենյակները իրարից բաժանվում էին մի թեթեւ պատով եւ ժամանակավորապես փակված դռով, այնպես որ, ականջելու դեպքում պարզ լսվում էր հարեւանների խոսակցությունը...

Արտաշեսն ու պետրոսը Գրիգորին հայտնում են բանի էությունը եւ խնդրում ուշի ուշով ականջել Նուրետտին բեյի, նրա կնոջ ու երիտասարդ եղբոր խոսակցությունները, ու ինչ որ կիմանա Ջեմալի մասին անմիջապես հայտնի իրենց: Ինչ կասկած, որ Գրիգորը ամենայն պատրաստակամությամբ հանձն է առնում այդ պատվավոր ու կարեւոր հանձնարարությունը սրբությամբ կատարել ու ժամը ժամին հաղորդել իր ականջածն ու լսածը:

Հետեւյալ գիշերը Հացի Մեյդանում գտնվող սերոբ Դուլարյանի փռում տեղի է ունենում, ինչպես նրա մասնակիցները իր ժամանակին անվանել են այն՝ «խորհուրդ»...:

Այդ խորհրդին մասնակցել են Խոտորջուրի գյուղերից.

Խանդածորից՝ Սերոբ Գեւորգյանը, Կարապետ Վարդիկյանը, Կիրակոս Պոքսյանը, Միջինթաղից՝ Պողոս Պողոսյանը, Տիգրան Թիփուխյանը, Արտաշես Գեւորգյանը, Ճիճապաղից՝ Օգոս Սչանյանը, Համբարձում Պալճյանը, Կրմտից՝ Մելքոն Քեմախյանը, Սունինցից՝ Հարություն Չախալյանը, Քեդուտից՝ Վարդան Տեր-Հարությունյանը, եւ Մոխրակոյից՝ Ստեփան Ծաղիկյանը, Պետրոս Տեր-Պողոսյանը (Քիթապորդ):

Ահա այդ համեստ փռում, 1922 թ. Հունիսի 14-ին Արեւմտահայ նահատակ ժողովրդի բեկորներից 13 հոգի խորհրդի նստելով, միաձայն մահվան են դատապարտում աշխարհի ամենամեծ ոճրագործներից մեկին, 20-րդ դարի առաջին ցեղասպանության հեղինակներից մեկին, հայ ժողովրդի գլխավոր դահիճներից՝ Ջեմալ փաշին:

Նշանակելի է, որ առհասարակ չափազանց զգուշավոր այդ հացագործներից ոչ ոք չի խոսում գործի վտանգավորության մասին կամ զգուշության քարոզ չի կարդում... Ամենքը համակված են եղել

մի վեհ գաղափարով՝ թեկուզ իրենց կյանքն ու բարեկեցությունը զոհեն, սնդավեն (խոտորջուրի բարբառով՝ սպանել վատին, գազանին) Ջենալ փաշին, վրիժառու լինեն իրենց մորթուված ու տանջամահ արված հարազատների համար...

Այդ միահամուռ որոշումից հետո մի պահ տիրում է վեհ, հաղթական լռություն... Բոլորը, կարծես խոսքը մեկ արած, հայացքները ուղղում են Արտաշեսին ու Պետրոսին...

Պետրոսը վեր է կենում ու հայտնում, որ Արտաշեսն ու ինքը դեռ Բաթունում ուխտել էին Ջենալից վրիժառու լինել, եւ այժմ հանգամանքների բերումով հնարավորություն կա իրենց ուխտը կատարել, հետեւաբար Ջենալի սպանության գործը իրենց վրա են վերցնում...

Արդեն ներկաների միտքն էլ այդ է եղել, նրանց հույսը Արտաշեսի ու Պետրոսի վրա է եղել... Այդպիսի վտանգավոր ու ռիսկով լի տեռորի համար դժվար է գտնել ավելի հարմար թեկնածու. երկուսն էլ անցել էին կռիվների բովից, թո՛ժվել ու իրենց ցույց էին տվել, որպես ոչ միայն քաջ ու անվեհեր կռվողներ, այլեւ անգերազանցելի սնայպերներ, ինչ որ տեռորի գործում անգնահատելի առավելություն է...

Չենց այդ խորհրդում էլ որոշվում է, թե ներկաներից ով ինչպիսի պարտավորություն է ստանձնում, ինչպիսի մասնակցություն է ստանձնում, ինչպիսի մասնակցությունպիտի ունենա տեռորի կազմակերպման գործին:

Չետեւաբար առավոտվանից ամեն ոք թողած իր անձնական գործերը, անցել էր իր ստանձնած վտանգավոր պարտականությունների անշեղ կատարման եւ, ի պատիվ նրանց, մանավանդ ծերերի, պիտի արձանագրել, որ ոչ մեկը չվախեցավ, չզղջաց, դասալիք չեղավ, չընկրկեց եւ ամենայն ոգեւորությամբ իր ուխտը կատարեց մինչեւ վերջին րոպեն...

Չուլիսի 16-ից սկսվում է շատ լավ կազմակերպված բազմակողմանի հետախուզություն-հետապնդում Ջենալի ու նրա համհարզների վերաբերմամբ:

Ամեն օր երեք հոգի ի բուն աջալուրջ հսկում են Գանովսկայա փողոցում (որտեղ թիվ 24 շենքում, տեղավորված էր Թուրքիայի հյուպատոսարանը) եւ հարակից փողոցներում եւ Ջենալի կամ նրա համհարզների բոլոր տեղաշարժումների մասին անմիջապես կապավորների միջոցով տեղեկացնում էին Պուշկինյան պուրակում հերթապահող մյուս ընկերներին:

Իսկ երբ հետեւյալ անգամ տիկին Նուրետտինը որից գալիս է հաց գնելու, Պողոսյանը դիվանագիտորեն նրա «մաղը թափ է տալիս»՝ հարց ու փորձ է անում Ջենալի մասին: Նա պատճառ բռնելով, որ բուլշեւիկները իրենց նեղում են ու արգելակում են մասնավոր առեւտուրն ու ձեռներեցությունը (այդ մասին նա առաջուց էլ գանգատվել էր Նուրետտին բեյի եւ միշտ էլ փոխհասկացության հանդիպել) հայտնում է, որ ինքը ստադրվել է մեծն փաշային դիմում

ներկայացնել, որպեսզի իրեն, որպես հավատարիմ թուրքահպատակի, թույլատրի վերադառնալ Թուրքիա...

Տիկինը կատարյալ ըմբռնողությամբ ու կարեկցությամբ է վերաբերվում Պողոսյանի խնդրանքին եւ հավաստիացնում է, որ իր ամուսինը անպատճառ կմիջնորդի եւ կօժանդակի այդ մասին...

Այդ եւ հետագա գրույցների եւ հարցուփորձի հետեւանքով Պողոսյանին հաջողվում է որոշ տեղեկություններ իմանալ: Նրա հնարած՝ Թուրքիա վերադառնալու իրավունք խնդրելու պատմությունը լավ պատրվակ է դառնում առանց կասկածի տեղիք տալու ամեն անգամ խոսք բաց անել Ջենալի մասին...

Սակայն Ջենալի մասին ամենակարեւոր եւ ստույգ տեղեկություններ հավաքում է Գրիգոր Չախալյանը:

Նուրետտին բեյը ամեն օր կեսօրվա ընդմիջման ժամանակ եւ երեկոյան, աշխատանքը վերջանալուց հետո, տուն գալով, սովորություն է ունեցել կնոջն հաղորդել իր տպավորությունները, իր կատարած գործերը, օրվա նորություններն ու հյուպատոսարանում տեղի ունեցած անցքերն ու խոսակցությունները: Բայց առավել ու հետաքրքիրը ու կարեւոր խոսակցություն տեղի էր ունենում, երբ Նուրետտին բեյի մոտ հավաքվում էին հյուպատոսարանի պատասխանատու աշխատողները:

Գրիգորը ամենայն բարեխղճությամբ ու հետեւողականությամբ ժամերով ականջը դրած իր եւ Նուրետտին բեյի սենյակների միջեւ եղած գոց դռանը, ականջում էր թուրքերի խոսակցության, որը այդ օրերին, բարեբախտաբար հաճախ դառնում էր Ջենալի շուրջը: Նա որսում էր ամեն մի խոսք, որ վերաբերվում էր Ջենալին ու ժամանակին հաղորդում էր Արտաշեսին ու Պետրոսին, որոնք համարյա միշտ Պուլշկինյան պուրակումն էին, բոլորի հավաքավայրը:

Այդպիսով տեռորի կազմակերպողները բավականին ճնշտ տեղեկություն ունեին Ջենալի առօրյա նիստ ու կացի, նախասիրությունների, նրա այցելուների ու շրջագայությունների, նրա այցելուների ու շրջագայությունների ծրագրի մասին...

Ի գուր չէ, որ «Չարյա Վոստոկա» թերթը սպանությունից հետո գրել էր թե «Սպանողները, ըստ երեւոյթին, քաջ ծանոթ են եղել Ջենալ փաշայի նիստ ու կացին եւ հետապնդելիս են եղել նրան...»:

Դրան ես կավելացնեմ.

-Այն էլ ո՞նց...

Այդ հաջող հետախուզական ձեռնարկումներից հետո Ջենալը մշտապես գտնվում էր տեսադաշտում, կարելի է ասել՝ իրանց թիրախի վրա... Մնում էր եւս մի կարեւոր նախապատրաստական գործ՝ համապատասխան զենք ձեռք բերել:

Թեեւ այն ատենները ժողովրդի մոտ դեռ պահված շատ զենքկար, սակայն այդպիսի կարեւոր գործողության համար պետք էր անպայման ստուգված, հարատեւ անխափան գործող եւ անվրեպ խփող զենք, որով առանց կասկածելու եւ տատանվելու վստահաբար կարելի լիներ հարձակվել այնպիսի վտանգավոր որսի վրա, ինչպիսին լինելու էր Ջենալի նման մարդ-իրեշը...

Թեև Արտաշեսը իր հետ Դոնբասից բերել էր «Մաուզեր» սիստեմի մի ատրճանակ, սակայն այն բավական ժամանակ արդեն անգործության էր մատնված, հետեւաբար ստուգման կարիք ուներ:

Մի քանի տեղ զանազան ատրճանակներով (Նզան, Քոլթ, Ստեեր, Պարաբելիում) ջոկջկելուց հետո, Արտաշեսն ու Պետրոսը հավանում են Պալճյան Համբարձումի մոտ եղած Մաուզերները: Թեև Պարաբելիումն էլ շատ ընտիր եւ պիտանի ատրճանակ էր, սակայն փամփուշտներ շատ քիչ ունենալու պատճառով չեն վերցնում: Իսկ Մաուզերի փամփուշտ հարյուրներով է եղել:

Բայց եւ այնպես որոշում են հավանած ատրճանակները ենթարկել մարտական փորձարկության, կրակել նրանցից: Այդ նպատակի համար ամենահարմար տեղը գտնում են հացի Մեյդանի փուռը: Այդ փռի վառարանը գտնվում էր շենքի խոր նկուղային ներքնահարկում, հետեւաբար վառած ֆարսունկայի առաջացրած հզոր աղմուկը անպայման խլացնելու էր կրակոցների որոտը, դրսում անլսելի էր դարձնելու:

Պալճյանի մոտ եղած այդ ատրճանակներին փամփուշտները իր փուռը տեղափոխելու համար Դուրլարյան Սերոբը իր հոգեորդի Սպեր գավառի Թշածոր գյուղացի 16 տարեկան որը Այվազ Այվազյանին, որ մի շատ ճարպիկ ու աչքաբաց պատանի էր, ուղարկում է Պալճյանի մոտ: Այվազը ստանալով հացի փոխադրման ձեռքի կողովում տեղավորված մոմլաթի մեջ փաթաթված ատրճանակներն ու փամփուշտները, Բեհրության փողոցով հաջողությամբ իջեցնում է իրենց փուռը:

Հետեւյալ գիշերը երբ հացի խանութը փակվում է եւ արհեստանոցի աշխատանքներն էլ վերջանում են, Արտաշեսն ու պետրոսը գալիս են փուռը, ֆարսունկան վառել տալիս եւ երբ այն խլացուցիչ աղմուկով ու դղրդոցով սկսում է վառվել, սկսում են ատրճանակներից կրակել փռի հողե հատակին:

Թե Պալճյանի մոտից բերած ատրճանակը եւ թե Արտաշեսի ատրճանակը փորձարկելու ժամանակ գործում են անխափան, հետեւաբար պիանի՝ գործողության համար: Վերջացնելով ստուգումը Արտաշեսն ու Պետրոսը խոհեմություն են զենքերը թողնել փռում Ս. Դուրլարյանի մոտ, մինչեւ գործողության զնալու պահը, որովհետեւ այն ժամանակները հաճախ տեղի էին ունենում անցորդների անակնկալ, պատահական խուզարկություններ, մանավանդ գիշերը, նույնիսկ ձերբակալություններ, ինչ որ կարող էր պատահել նաեւ իրանց հետ եւ վտանգել ամբողջ գործը...

ԵՎ ճիշտ՝ Արմենակի բազարում շուրջկալի են ենթարկվում եւ մեծ դժվարությամբ կարողանում են իրենց օձիքը ազատել շուրջկալից...

Մի երկու օր անց Ջենալ փաշան իր արբանյակներով մտնում է Դվորցովայա փողոցում գտնվող Վրացական ակումբի ամառային ճաշարանը ընթրելու: Կապավորները լուրը անմիջապես հասցնում են Արտեշեսին ու Պետրոսին, որոնք անմիջապես շտապում են այնտեղ: Նրանց նպատակն է եղել մոտիկից անձամբ տեսնել փաշային, ստուգելու թե արդյոք դա իրոտք իրենց փնտրած Ջենալ փաշան է,

թե՛ մի ուրիշը... Չէ. որ թուրքնայում կարող են լինել շատ ջեմալներ ու Ջեմալ փաշաներ... ԵՎ սխալի դեպքում կարող է սպանվել բոլորովին այլ՝ զուցե մի անմեղ Ջեմալ...

Պիտի գիտենալ, որ այն ժամանակները դեռ թուրք ազգի մեջ գոյություն չունեին ազգական գործածությունը եւ սկսած ամենանշանավորներից մինչեւ հետին թուրքը, թե առտնին պարագաներում եւ թե պաշտոնական գրություններում կամ վավերագրերում կոչվում են սոսկ իր անունով, ճիշտ այնպես անփոփոխ, ինչպես դարեր առաջ երբ թուրքերը դեռ կիսավայրենի վաշկտուներ էին... (Ազգանվան գործածությունը պարտադիր կարգով մտցրեց Քեմալ փաշան, որով ինքը, Քեմալը դարձավ՝ Աթաթիլը, Իսմեթը՝ Ինենիլ եւ այլն...)

Գալով վրացական ակումբի ճաշարանը, մեր երիտասարդները գրավում են մի հեռավոր, բայց իրենց նպատակի համար շատ նպաստավոր սեղան, որտեղից շատ պարզորոշ երեւում էր Ջեմալը: Նրանց մոտ է Ջեմալ փաշայի այն նկարը, որը տպված էր ռուսական Տարեգրքում (1915 թ., երես 139, Մոսկվա):

Չամենատելով այդ նկարը իրենցից մի քիչ հեռու նստած կենդանի փաշայի հետ՝ գտնում են, որ ոչ մի կասկած չի կարող լինել. այդ հենց ինքն է, իրենց փնտրածը, արյունլակ Ջեմալ փաշան:

Անձամբ մոտիկից տեսնելով մեր նահատակված ժողովրդի մեծագույն դահճապետներից մեկին, դիտելով նրա անհողարար զվարճախոսելով քեֆ անելը, նրա փաշայական ամբարտավան կեցվածքը, նրա ինքնաբավ, գոռոզ ու արհամարհող նայվածքը, Արտաշեսն ու Պետրոսը իրենց անհունորեն վիրավորված ու նվաստացած են զգում... Նրանց հոգին լցվում է շուտափույթ հատուցման անզուսպ ցանկությամբ...

-Սիրտս ասում է, մոտեցիր ու տեղն ու տեղը խեղդիր այդ մարդ-գազանին,- շշմջում է Արտաշեսը:

Ել, Արտաշես, դուրս գնանք... Թե չէ՝ գայթակղությունն ինձ էլ է խեղդում,- գայրութով պատասխանում է Պետրոսն ու ընկերոջ թեւը վերցնելով շտապում են դուրս...

Արդեն ամառային պարզ գիշեր էր դրսում: Նրանք հուզված, վրդովված, երկար թափառում են թիֆլիսի փողոցներում...

-Պետրոս, այս իտնչ է տեղի ունենում...

-տխրությամբ ասում է Արտաշեսը - մի հատիկ մարդ սպանող հանցավորին բռնում են, բանտարկում, դատում, կախաղան են բարձրացնում ի տես մարդկանց, որպեսզի մարդիկ զգուշանան, վախենան ու նման ոճիր չգործեն... Իսկ այս ճիվաղը, հարյուր հազարավոր անմեղ երեխա ու կին սպանել տվող այս հազարապատիկ ոճրագործը ազատ ման է գալիս մարդկային հասարակության մեջ եւ դեռ պատվավոր հյուր էլ է համարվում... Նման ոճրագործներին ու մարդակեր գազաններին ոչ թե հյուրընկալելու էր բանվորագյուղացիական երկրում, այլ կաշին պիտի հանվեր եւ աշխարհքով մեկ ման ածելով ցույց տրվելը

մարդկանց, որպեսզի դաս լինել ցեղասպանության ատմական ունեցող բոլոր արնածարավ պետական գործիչներին...

-Ե՛վ որպիսի~ վիրավորանք ու արհամարանք դեպի մեր անթիվ անհամար նահատակները,- շարունակում է արտաշեսը.- Ի.նչ է նշանակում այս բացառիկ բարեացական վերաբերմունքը դեպի հայ ժողովրդի դահճապետը... Ե՛վ ոչ միայն հայ ժողովրդի, այլև Արաբ, Թուրք աշխատավոր ժողովրդի ռիսերիմ թշնամի, արիստոկրատ ջարդարար Ջեմալ փաշան...

- Դիվանագիտական խաղ... - իրեն հատուկ չարաճճի հուճուրդ պատասխանում է Պետրոսը - ավելի ճիշտը՝ քաղաքական պոռնկություն... Չէտ որ դիվանագիտությունը համարվում էր յուրատեսակ պոռնկություն՝ ընդունակ ամեն տեսակ արդահատելի դերի...

-Այդ վերաբերվում է կապիտալիստական պետությունների դիպլոմատիային. մեր դիպլոմատիան ժողովրդական է, պարզ ու անսեթեւեթ, ուղղամիտ ու ուղղախոս, դասակարգային...

Ինչ ես կորցրել՝ ինչ ես փնտրում... Դասակարգային~ն ... Մեր դիպլոմատների դասակարգային զգոնությունը այնքան բթացել է, որ նրանք առանց ամաչելու թքեցին թուրքական կոմունիստների առաջնորդ Մուստաֆա Սուրխու նվիրական հիշատակի վրա եւ նրան խեղդամահ անող դահիճներին բարեկամական ձեռք մեկնեցին... Նույնիսկ ինձ պես հասարակ մահկանացուն պարզ է, որ Քեմալիզմը պանթուրքական ջարդարար փաշաների, Թուրքիայի աշխատավոր մասսաների դաժանաբար շահագործող ու կեղեքող ֆեոդալների, գուցե եւ խոշոր առետրականների դիկտատուրան է. իսկ մեր դիպլոմատները Քեմալիզմը համարում են ոչ միայն ներկա Թուրքիայի, այլ ամբողջ մուսուլմանական աշխարհի հեղափոխության ռահվիրան... Իտնչ կասկած, որ դրա համար նրանք ոչ մի լուրձ հիմք չունեն, բացի... Քեմալի մի քանի խորամանկ, խաբեբա հայտարարություններից, որոնք ոչ մի գործնական քայլով չեն արդարացված... Նույնիսկ Քեմալի մի ափաշքարա կոպիտ խաղը՝ իր փաշա-մինիստրների կոմիսար կոչելը՝ մեր դիպլոմատներին հմայել ու հիմարացրել է վերջնականապես... Արտաշես, լավ է չխորանանք... Ավետարանն ասում է, զորն ասեն ու զորը խոստովանեն...

- Քիթաարող, այս ամենը դիվանագիտական խաղով կամ սխալներով բացատրելը հարցը շատ պարզեցնում է... Այս խնդրում գուցե մի այնպիսի հանգամանք կա, որ մեզ մատչելի չէ...

- Դավաճանություն...- խոսքը կտրում է Պետրոսը:

- Չգիտեմ, չգիտեմ... Ես միայն այն գիտեմ, եւ հաստատ գիտեմ, որ այն քաղաքականությունը, որ այժմս տարվում է Քեմալական Թուրքիայի վերաբերմամբ սոցիալիստական երկրին խորթ է, օտար է, վայրենի է, անվայել է, այն չի բխում Զոկտեմբերյան Զեղափոխության եությունից...

- Այլ դարձ՝ այլ բարձր...

- Չէ որ - զայրուծով շարունակում է Արտաշեսը - այդ նույն փառանքներն էին, որ դեռ սուլթանների եւ Իթքիատի ժամանակ էլ գործում էին ու Յոկտեմբերյան Յեղափոխության հաղթանակից անմիջապես հետո հարձակվեցին մանուկ խորհրդային իշխանության վրա եւ Կովկասյան հակահեղափոխական ուժերի գլուխ անցած արշավեցին Բաղուի Կոմունայի վրա եւ որտեղ որ իրենց արյունաթաթախ թաթը հասավ՝ արյան մեծ խեղդեցին այն ամենը, ինչ խորհրդային էր, ինչ թեկուզ հեռավոր կերպով հիշեցնում էր սոցնալիզմն ու հեղափոխությունը... Վերջապես Քեմալի փառանքներն էին, որ դեռ մի տարի առաջ, նույնիսկ Մոսկովյան կոնֆերենցիայի օրերին ժամանակավորապես գրավված խորհրդային Ալեքսանդրով, Ռեյկոմի եւ խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի աչքի առջեւ, առանց քաշվելու, ամայն բարբարոսությամբ, ինչպես արել էին Յամիտն ու Իթքիատը, նախճիր սարքեցին ու ջարդեցին ավելի քան հարյուր հազար անմեղ ու անզեն աշխատավոր խորհրդային քաղաքացիներ, կանայք, ու երեխաներ... Ամբողջ երկիրը թալանեցին ու ավերեցին... Ինչպես այդ արյունակալ փառանքերը կարող էին հեղափոխության ռահվիրա դառնալ կամ պրոլետարական պետության ու դաշնակից դառնալ. մեծ հանելուկ է... Այս խնդրում անշուշտ մի ահավոր գաղտնիք կա...

- Գաղտնիքն այն է, որ հայ ժողովուրդը ամենքից լքված, թույլ ու փոքր ժողովուրդ է, մեր երկիրն էլ ծայր աստիճան աղքատ ու անհեռանկար... Յետեւաբար մեզ ոչ ոք բանի տեղ չի դնում, մեզ հաշվի չի առնում, մեզ համար ոչ ոք չի ուզում Թուրքերի հետ հարաբերությունները սրել ու զժտվել, այդպես է այժմ վարվում նույնիսկ խորհրդային Պետությունը...

Ահա գաղտնիքը, որը եւ մեր ժողովրդի բոլոր դժվարությունների մշտական գլխավոր աղբյուրն է հանդիսացել... Ինչ ես կարծում, եթե այդպես չլինեք, Ջեմալը ռիսկ կատներ գալ Թիֆլիս ու ամբարտավանաբար քեֆ անել այստեղ...

- Ոչինչ, դրա համար թանգ կվճարի մա...

Այդ գիշեր, Ջեմալին պատահելուց հետո, երնտասարդ հայրենասերների հոգին մշտապես տանջող ցավը ավելի էր բորբոքվել... Նրանց ավելի զգալի էր դարձել հայրենիքի կորուստի ահավոր հատեւանքները, թուքահայ աշխատավոր ժողովրդի թշվառ, անելանելի ու անհեռանկար վիճակը, նրա անտեր ու անպաշտպան լինելը...

Նրանք երկուսն էլ հեռվից դիտող, չեզոք հայրենասերներ չէին եղել: Նրանք ամենայն գիտակցությամբ ու անձնագոհությամբ իրենց ջահել կյանքը ի սպառ էին դրել բազմաչարչար ժողովրդի ազատագրման ու վերածննդի վեհ գործին: Եղել էին ազնիվ, կարգապահ, քաջամարտիկ զինվորներ, խիզախաբար կռվելով առաջավոր դիցքերում ընդդեմ թուրքական հորդաների...

Օ~, ինչպիսի դառ-վառ հույսերով էին տոգորված այն ժամանակ... Ինչպե՛ս գեղեցիկ, ազատ, դեմոկրատիկ, բարեշեն ու

բարեկեցիկ էին պատկերացնում սուլթանական դարավոր լծից ազատագրված Հայաստանը...

Բայց այդ վառ հույսերը կամաց-կամաց նսեմացել ու 1920 թվականի աշնանը վերջնականապես խորհակվել էին Դաշնակցության խելահեզ, անհեռատես, անխոհեմ, ապիկար գործունեության հետեւանքով: Բայց հետո, Հայաստանի խորհրդայնացմամբ մի պահ «հույսի դռները նորից բացվել էին», մանավանդ 1921 թվականի գարնանը, երբ Մոսկվայում տեղի էին ունենում հեխտության բանակցությունները Քեմալական թուրքիայի հետ:

Ինչպես Ռուսաստանում գտնվող բոլոր թուրքահայերը, Պետրոսն ու Արտաշեսն էլ ոգեւորված էին այն օրերին ու մեծ սպասումներով իրենց հայրենադաձ հայացքը ուղղել էին դեպի Կարմիր Մայրաքաղաքը, հավատացած, որ հաղթանակած պրոլետարիատի դիպլոմային Հայ-թուրքական դարավոր վեճը կլուծի մեծ Լեւինի աշխարհով մեկ հռչակված սկզբունքների ոգով, այսինքն՝

ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ԱՆԵԿՍԻԱՅԻ ՈՒ ԿԱՆՏՐԻԲՈՒՑԻԱՅԻ ԲՈՒՐ ԾՆՇՎԱԾ ԱԶԳԵՐԻՆ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԼԻԱԿԱՏԱՐ ԻՐԱՎՈՒՆՔ

Այն ժամանակներում հայ հայրենասերների միտքը հուզող ու ալեկոծող այսպիսի հարցերի շուրջը երկար վիճելով, բացատրվելով ու մտորելով, Արտաշեսն ու Պետրոսը հոգնած կանգ են առնում Մուխրանսկի կամրջի վրա:

- Պետք է զնալ Հայաստան, թե ու թիկունք լինել կառավարության, այդ այժմ նույնպես կարելոր է ինչպես ճակատներում կռվելը... Այ, ես կզնամ հայաստան եւ կխնդրեմ, որպեսզի մեր գյուղացի երիտասարդներին տրամադրվի թեկուզ երկրի ամենահեռավոր ու անենաավերակ, խոպանացած անկյուններից մեկը:

Այդտեղ մեր երիտասարդական ամբողջ ուժը, արյունը, տոկունությունը ի սպաս դնելով կստեղծենք նոր օջախ, նոր կենցաղ, նոր տնտեսածեւ, միանգամայն ներհակ անցյալին... Այն կլինի խարոխված հեղափոխության ու գիտության նվաճումների վրա: ՌԻկրախնայում կան այդպիսի տնտեսություններ, եւ կոչվում են կոմունա:

Հանված կամրջի երկաթյա բազրիքներին, Արտաշեսն ու Պետրոսը մի պահ լուռ դիտում են իրենց առաջ բացված գիշերային գեղեցիկ տեսարանները...

Քաղաքային ժամացույցը խփում էր գիշերվա ժամի երկուքը: Երջանիկ Թիֆլիսը կապտավուն խավարի մեջ նիրհում էր հանգիստ ու անխռով-ապահով...

Տրամվայները, կառքերը վաղուց դադարել էին աշխատելուց... Նույնիսկ ուշացած ճամփորդները չէին երեւում փողոցներում, համատարած լռություն ու անդորրություն էր թագավորում քաղաքի վրա. երբեմն միայն Քուռ գետի խաղաղ կոհակների ախորժալուր ճողփյունն էր լսվում ներքեւից...

պետրոսը մեծ ջերմութեամբ արտասանում է Մեծարեմցի «Գիշերն անուշ է, գիշերն հեշտագին» բանաստեղծությունը:

Երբ վերջացնում է, համակված տխրութեամբ ասում է.

- Արտաշես, ի՜նչ լավ է խաղաղությունը... Ամենայն բարնք ու երջանկություն է բերում մարդկությանը...

Մեզ համար այդ խաղաղությունը շատ թանգ գնով ձեռք բերվեց, պատասխանում է արտաշեսը, - այնուհանդերձ ես վստահ եմ, որ հայ ժողովուրդը եթե մի քանի տասնյակ տարի խաղաղության մեջ ապրի, կստեղծի այնպիսի մի ծաղկած հայրենիք, որը ի վիճակի կլինի բոլոր հայերին էլ հայրենիք ընդունելու... Մնայն լինի խաղաղություն...

Ընկերները նորից լռում են. ամեն մեկը տարվում է իր մտքերով... Գուցե անրջում են իրենց անհատական կյանքի մասին. չէտ որ երկուսն էլ երիտասարդ էին ու ամուրի...

Քիչ անց Արտաշեսը խզելով լռությունը դիմում է Պետրոսին.

- Քիթարող, ամենաճիշտը կլինի՝ փաշային սնդակելուց հետո ամենեւին էլ չհեռանալով զազանի դիակից, չխուսափել իշխանություններից... Խոն մենք ավագակներ չետնք, բանդիտներ չետնք... Մենք միլիոնավոր անմեղ մորթոտված կանանց ու երեխաների վրեժն ենք լուծում, մի ամբողջ ազգ սպանող մարվզազանի ենք պատժում... Իտնչ ես ասում, այսպես ավելի արջանավոր չիտ լինի...

Պատասխանելու համար Պետրոսը երկար չի մտածում: Այդպիսի առաջարկությունը շատ նրա սրտով էր լինելու: Համապատասխանում էր նրա բուռն, կրքոտ ու արկածասեր խառնվածքին... Նա միայն ավելացնում է, որ իշխանություններին հայտարարենք, որ այդ տեղորը մորթոտված միլիոնավոր թուրքահայության վրեժը լինելուց բացի, նաեւ հայ ժողովրդի բողոքն է հայակեր թուրք փաշաների հետ սերտորեն բարեկամանալու դեմ...

Այդպիսի որոշումից հետո, կարծես անցնում է նրանց հոգեկան ու ֆիզիկական հոգնությունն ու նրանք ուրախ տրամադրությամբ երգելով այն ժամանակները արգելված անմահ Նալբանդյանի «Մեր հայրենիքը», գնում են քնելու:

Հետեւյալ առավոտյան, երբ ընկերներին հայտնում են այդ որոշումը, նրանք ուղղակի ծառս են լինում դրա դեմ, մանավանդ տարեցները, այդ համարելով տաքզլխություն, երիտասարդական տհաս մտքի ցնորք, վտանգավոր ցուցամոլություն ու կորստաբեր անխոհեմություն...

Արտաշեսն ու Պետրոսը պնդում են իրենցը.

-Թող դատ ու դատաստան լինի, մենք չենք խուսափի մեր դասակարգի, մեր պետության դատաստանից... Մենք հանցագործներ չենք, այլ հանցագործի պատժողներ...

- Ներկա թուրքամոլական քաղաքականության պայմաններում ի՜նչ դատ, ի՜նչ դատաստան, ի՜նչ արդարություն, ինչ դասակարգային մոտեցում... Արտաշես~ս, լավ գիտցիր, որ Դոնբասի քո գիտցած բուլշեւիկ բանվորները չեն որ ձեզ մոտենան

դասակարգային չափանիշով... Ձեզ այնպես «ափ ու խուփ» կանեն՝ որիսկի ձեր իզն ու թոզը չերեւա...

Էլի երիտասարդները պնդում են իրենցը. տարեցները ստիպված են լինում հավաքել խորհուրդ: Բոլորը գնում են Թիֆլիսի Բուսաբանական այգին, այնտեղ մի հարմար, անվտանգ տեղ երկար վիճում ու վերջիվերջո համոզում Արտաշեսին ու Պետրոսին ետ կենալ իրենց անխոհեմ ծրագրից ու չվտանգել բոլոր մասնակիցներին... Այս շատ կարեւոր հանգամանքն էլ համոզում է երիտասարդներին հրաժարվել իշխանությունների կամավոր կերպով հանձնվելու մտքից:

Դրանից հետո մի լավ ուտում են, խմում Բուսաբանական այգու բուֆետում ու համերաշխ հեռանում:

Վերջին բաժակի վրա Արտաշեսը հայտարարում է, որ այլեւս ձգձգվել ու սպասել շատ բարեհաջող իրադրության՝ անկարելի է, ինչ էլ որ լինելու է թող լինի, առաջիկա երկու-երեք օրում պիտի վերջ տրվի փաշային...

Պետրոսը իր կողմից ավելացնում է, որ շատ ժողովուրդները վախենալու նշան է...

- Վախենալու բան չկա եւ այստեղ վախկոտներ չկան,- պատասխանում են ընկերները,- մենք միայն պիտի այնպես անենք, որ այս սուրը գործի մեջ տուժողը միմիայն թուրքը լինի... Այս է իմաստությունը, հնարքը...

- Այնքան զոհեր է տվել հայ ժողովուրդը, որ մեկը ավել մեկը պակաս նշանակություն չունի,- ասում է Պետրոսը:

- Հենց նրա համար, որ հայ ժողովուրդը այնքան զոհեր է տվել, ուրեմն էլ նոր զոհեր տալուց ամեն կերպ խուսափելու է: Մանավանդ ձեզ պես ասլան-բալասիներ...

Մյուս առավոտվանից վերսկսվում է կանոնավոր հետախուզում-հետապնդում Ջենալի հետեւից. ամեն ոք իր դիրքի վրա է. աչալուրջ ու զգոն:

Մինչեւ ամսի 21-ին ոչ մի առանձին բան չի պատահում, հարմար առիթ չի ներկայացնում, օրն անցնում է տաղտկալի եւ տխուր:

1922 թվականի Հունիսի 21-ին, Ռիբբաթ օրը, Ջենալ փաշայի համար ճակատագրական այդ օրը, մուսուլմանական այդ կիրակին, նա իր համհարզ Սուրսիա բեյի եւ անձնական քարտուղար Նուսրեթ բեյի ուղեկցությամբ բարձրանում է Թիֆլիս քաղաքի հրաշալիքներից մեկը՝ ֆունիկուլիորը, նրա գովաստում ռեստորանում քեֆ անելու, այնտեղից գնալվելու դեպի քաղաք ու հեռուները բացվող ակնահաճո տեսարաններով...

Ջենալին հետեւելու պաշտոն ունեցող հետախույզներից երկուսը նրա հետեւից անմիջապես բարձրանում են ֆունիկուլիոր, իսկ երրորդը լուրը Արտաշեսին ու Պետրոսին հաղորդելուց հետո, նույնպես բարձրանում է վերեւ, միանում ընկերներին: Նրանք երեքով կարողանում են Ջենալի ֆունիկուլիորում եղած ամբողջ ժամանակ, առանց աչքի ընկնելու եւ որեւէ կասկած առաջացնելու, փաշայի

սեղանը իրենց տեսադաշտի տակ պահել եւ պարբերաբար անցած դարձածի մասին լուր տանել ներքեւ, վրիժառուններին:

Կեսօրից անց, երբ բանքերը լուր է բերում, թե փաշան բավական խմել է եւ շաղակրատում է ազատ, վրիժառունները որոշում են անհապաղ բարձրանալ վերեւ ու այնտեղ հենց քեֆի սեղանի շուրջը շանսատակ անել Ձենալին: Սակայն երբ գնում են զենքերը վերցնելու, այնտեղ, մի քանի ընկերների հետ ավելի հանգամանորեն քննում են այդ որոշումը եւ գտնում են ավելի վտանգավտորը... Որովհետեւ սպանությունից հետո ֆունկիուլիորից հեռանալը, թագնվելը բավական երկար ժամանակ էր պահանջելու, որի ընթացքում իշխանությունները հնարավորություն ու ժամանակ կունենային չեկիստներով, միլիցիոներներով, նույնիսկ զորքով օղակելու ֆունկիուլիորն ու բռնելու այնտեղից դուրս եկող բոլոր ելքերը, հետեւաբար այնտեղ եղած բոլոր մարդկանց ստուգելու, խուզարկելու եւ ձերբակալելու, ինչ որ շատ հեռուն կարող էր տանել եւ լի էր անակնկալներով...

Նրանք տեռորը մի այնպիսի տեղ պետք է կատարեին, որտեղից անմիջապես, մի քանի րոպեում հեռանալու, հետքերը կորցնելու առավել հնարավորություն լինել...

Վրիժառունները լավ հասկանում էին, որ իրենց հաջողությունը կախված է գլխավորապես գործողության կատարման արագությունից: Ըստ նրանց ենթադրության, սպանությունը տեւելու էր մեկ րոպեից ոչ ավելի... Երկու-երեք րոպե էլ պետք կլիներ, որպեսզի իրենք հեռացած լինեին դեպքի վայրից ու մտած մի կողմնակի փողոց, որով խուսափած կլինեին ակամատեսներից... Հետեւաբար ճգնաժամային դրությունը տեւելու էր ընդամենը ոչ ավել հինգ րոպեից, որի ընթացքում դժվար թե իշխանությունները կարողանային հասնել տեռորի վայրը, հետապնդում կազմակերպել... Այդ ամառային խաղաղ երեկոյան կրակի մահաբույր վայրը շտապող սիրահարներ կգտնվեն...

Միմիայն պատահական, անակնկալ արեւ է խոչընդոտ կարող էր այդ հաշիվը խախտել...

Հրաժարվելով ֆունկիուլիորում գործելու մտադրությունից, վրիժառունները կառքով բարձրանում են ֆունկիուլիորի ներքեւի կայանը, բաց թողնում կառքը, որի հեռանալուց հատո միայն իրենք ոտքով, դանդաղ ցած են իջնում, հետազոտելով այն տեղանքը, որտեղից հավանաբար պիտի անցներ Ձենալը քաղաք իջնելուց հետո... Ապա երկու անգամ Պետրոս Մեծի փողոցից տարբեր ուղիներով անցնում են դեպի Վոզնիսենսկայա փողոց, Պալճյանի փուռը, ճշտելով գործողությունից հետո հեռանալու եւ այնտեղ գնալու ուղին...

«Այդ հետախուզություններից հետո վերջնականապես որոշում են փաշայի վրա հարձակվել... ՉԵԿԱՅԻ ՇԵՆՔԻ եւ Սուլուակի միջեւ ընկած հատվածում: Քանի որ խնջույքից հետո Ձենալը ամենայն հավանակությամբ ամենակարճ ուղիով անցնելու էր դեպի Դանովսկայա փողոց, թուրքական հյուպատոսարան:

Մեծն Պետրոսի փողոցը Թիֆլիսի խաղաղ փողոցներից էր, մարդաշատ չէր լինում, խանութներ չկային այնտեղ, հասարակական հաստատություններ չկային, միլիցիայի պոստ չկար փողոցի այդ հատվածում: Չախ կողմում, Պալատի եւ այգու հետեւի մասում բնակելի տներ չկային, այնպես որ շատ ձեռնտու էր գործողության համար... Իսկ ամենապատվավորը այն էր, որ այդտեղից հեռանալու եւ հետքերը կորցնելու համար շատ քիչ ժամանակ էր հարկավոր լինելու: Երկու-երեք ռոպեում կարելի էր հասնել Երեւանյան հրապարակ ու խառնվել այդ պահերին այնտեղ մշտապես զբոսնող հոծ հասարակության հետ կամ ծուռունուռ սակավ լուսավորված նրբանցքներով ու նեղ փողոցներով էլի երկու-երեք ռոպեում հասնել Վոզնեսենսկի փողոց, Պալճյանի փուռը, որտեղ նշանակված էր իրենց առաջին ապաստարանը:

Այդ ըստ ամենայնի ձեռնտու ծրագրի միակ բացասական կողմը այն էր, որ գործողության վայրը գտնվելու էր Չեկայի շենքին շատ մոտիկ...

Այնուհանդերձ Արտաշեսն ու Պետրոսը հավանում են այդ ծրագրին եւ ամենայն պահարյունությամբ ձեռնամուխ են լինում հենց այդ որոշումի իրագործման, ասելով. «Այդտեղ մեզ ոչինչ չի խանգարի սպանելու Ձեմալին, իսկ նրան սպանելուց հետո՝ թեկուզ ջրհեղեղ...»:

Կապավորներին էլի մի քանի արդեն երկրորդական նշանակություն ունեցող կարգադրություններ տալուց հետո, վրիժառունները գնում են Յացի մեյդանի փուռը զինվելու: Ամբողջ խումբը կազմ ու պատրաստ իրենց դիրքերումն են, դերերը հստակորեն գիտեն, փոքրիկ Այվազին պատվիրում են գնալ Պալճյանի փուռը իր հետ վերցնելով հաց տեղափոխելու կոովը եւ այնտեղ սպասել իրենց, զուցե հարկավոր լիներ այնտեղ հասնելու պես զենքերը տեղափոխել ուրիշ տեղ...

Կապավորներից մեկը այդ պահին գալիս հայտնում է, որ Ձեմալը իր ընկերներին ասել է.

- Սպասեք քաղաքի լույսերը վառվեն. գիշերային տեսարանը շատ գեղեցիկ է լինելու...

ԵՎ նորից կոնյակ են պատվիրել:

Պարզ է՝ ուրեմն մինչեւ ուշ երեկո Ձեմալը իր ընկերներով մնալու է ֆունիկուլիորում... Ավելի լավ... Մթան մեջ ավելի հեշտանում է եւ՝ գործը, եւ՛... խուսափումը...

Արդեն զինված գործելու պատրաստ, Արտաշեսն ու Պետրոսը գալիս են Պուշկինսկի, Գեւորգյանների տանը մի փոքր ճաշում են ու որոշում այդտեղ էլ սպասել ֆունիկուլիորի բանբերներին... Որքան հնարավոր էր նրանք պետք է զինվելուց հետո քիչ ժամանակ դուրսը գտնվեին, որովհետեւ կարող էր որեւէ անակնկալ խոչընդոտ հանդիպեր ու ամբողջ գործը փչացներ...

Սպասումի դաժանագույն ու անվերջանալի պահեր են անցնում այդտեղ: Վերջապես կառքը կանգ է առնում փողոցում ու

կապավորներից երկուսը երեւում են բակում... Արտաշեսը իր գլխարկը փոխում է, ծածկում ուրիշն ու դուրս են գալիս տանից...

Երբ ֆունկիուլիորի հետախույզներին պարզ է լինում, որ քեֆը վերջանում է եւ անձնական քարտուղարը պատրաստվում է վճարում կատարել, նրանցից երկուսը անմիջապես իջնում են քաղաք, լուրը հաղորդելու. իսկ երրորդ հետախույզը մնում է՝ շարունակելու հսկողությունը:

Ներքեւում, ֆունկիուլիորի կայանում սպասելիս են եղել երկու կառք. հետախույզները մեծ իմաստություն են ցուցաբերում նախորոք վարձելով երկու կառքերն էլ. այլապես շատ հավանական էր, որ փաշան իջնելիս կառք նստեր ու սրընթաց հեռանալով փրկվեր այդ օրը...

Փաշայի իջնելու լուրն իմանալով-պատմում էր Արտաշեսը - կարծես մի ծանրագույն բեռ ընկավ մեր վրայից... Ազատ շունչ քաշեցինք... Թեւեւ արդեն ուշ երեկո էր, մթնշաղ, բայց թվաց թե աշխարհը լուս-լուսացավ, պայծառացավ մեկեն...

Պուշկինյան պուրակում, ըստ պայմանավորվածության սպասում էին մյուս ընկերները: Որոշվել էր, որ Պետրոսը ու Արտաշեսը այդտեղից գնալու են առանձին-առանձին, զուգահեռ մայթերով, բավական հեռավորության վրա, բայց առանց իրար աչքից կորցնելու: Նրանց հետեւից մի քանի քայլի վրա գնալու էին անգլեն կապավորները, իբրեւ չքոսողներ... Նրանք պիտի հատեւեին մինչեւ այնտեղ, որտեղ Արտաշեսն ու Պետրոսը կմիանան իրար...

Նախորոք նույնպես որոշվել էր, որ եթե Արտաշեսի կամ Պետրոսի հետ մի որեւէ ձախորդ դեպք պատահի, որի հետեւանքով մեկը չկարողանա շարունակել ճամբան, հետ մնա կամ բոլորովին շարքից դուրս գա, այդ պարագային մյուսը չպիտի զբաղվի հետ մնացողի վիճակով, այլ աննահանջ պիտի դիմի նպատակի իրագործման եւ մեն-մենակ գրոհի փաշայի վրա, «սնդավի» նրան... Իսկ հետ մնացող ընկերոջ վիճակով պիտի զբաղվեն կապավորները, որոնք հրազենի փոխարեն գրպաններում ունեին բավականաչափ չերվոնցք... Նրանք հանդես պիտի գային իբրեւ պատահական անցորդներ...

Առանց պատահարի նրանք, Արտաշեսը եկ Պետրոսը անցնում են Դվորցովայա նեղիկ փողոցը, որտեղ խառնիխուռն զբոսնող հազարավոր ամբոխը զգալիորեն խանգարում ց իրենց արագ առաջանալուն... Այդպես է լինում նաեւ Գոլովինսկու սկզբում, Պալատի առաջ: Բայց երմոլովյան վերելքում (Պալատի եւ Ռուսական Ալեքսանդր-Նեւսկու տաճարի միջեւ) մարդիկ շատ քիչ են լինում ու նրանք արագությամբ բարձրանում են դեպի վեր: Ստեպստեպ նրանք հանդիպում են վերելից իջնող զինված մարդկանց, որոնք անկասկած՝ չեկիստներ են եղել... Քիչ անց երեւում են Չեկայի շենքերը, որոնց մուտքի առաջ հսկում են զինված ժամապահները...

Մի քանի քայլեր առաջանալով նրանք տեսնում են, որ վերելից, ձախ մայթով իջնում են երեք մարդ, որոնք հասնելով Պետրոս Մեծի փողոցի անկյունը, մտնում են այդ փողոցը... Նրանց ետեւից իջնում է չորրորդը, որը ֆունկիուլիորում մնացած երրորդ կապավորն է, ինքը՝

ծերունագարդ հայրենասեր Սերոբ Դուրլարյանը... Այդտեղ էլ Արտաշէսն ու Պետրոսը միանում են իրար եւ գլխով նշան անում իրենց հետեւից ընթացող կապավորներին, որ ետ գնան... Ս. Դուրլարյանը գլխով ցույց տալով դեպի երեք հոգին, այսինքն ՆՐԱՆՔ էՆ, անձկանոք ասում Արտաշէսին ու Պետրոսին.

- Օրհնվի ձեզի բերող մայրն, որդի~ք, աստվա ուխտնիդ ընդունելի էնա... - եւ արագ իջնում է ներքեւ...

Պետրոս Մեծի փողոցը այդ պահին, ժամի տասի մոտերքը, համարյա թափուր է լինում... Միայն հեռվում, երեւում են հետ ու կենտ մարդիկ (որոնք, իհարկե չէին կարող խանգարիչ լինել իրենց գործին)... Փողոցի աջ մայթով (դեպի Սուրակ գնալիս) գնում էին Ջենալն ու իր երկու ընկերները: Նրանք քայլում էին սովորական, հանգիստ քայլերով, զրուցելով... Արտաշէսն ու Պետրոսը նրանց հետեւում էին գնալով նրանց զուգահեռ ձախ մայթով (այսինքն Պալատի եւ Պարտեզի պարիսպ-ցանկապատի կողմից): Նրանք քայլերը արագացնում են, բայց էլի մեծ զգուշությամբ՝ անձայն, անշշուկ եւ աննկատելի հավասարվում են Ջենալի հետ...

Ջենալ փաշան քայլում է մեկի հետ թեւանցուկ: Նրանցից մեկի ձեռքին ձեռնափայտ կա, իսկ երրորդը մի քիչ առաջից է գնում... Լսելի է նրանց ոչ հստակ, կցկտուր խոսակցությունը: Արտաշէսն ու Պետրոսը մի վայրկյան կանգ են առնում, ետ նայում Չեկայի կողմը ու ոչինչ կասկածելի, վտանգավոր չեն նկատում. Չեկայի առաջ ժենապահները առաջվա նման հանգիստ հսկում են իրենց պոստերի վրա: Ուրեմն թիկունքից որեւէ վտանգ, արգելք առայժմ դեռ չկա... Իսկ Առջեւում, Սուրլակի կողմը, մայթերի վրա թեւ երեւում են մի քանի տղամարդ եւ մի կին, բայց նրանք դեռ բավականին հեռու են եւ սովորական անցորդները են երեւում, հետեւաբար չեն կարող խոչընդոտ հանդիսանալ իրենց...

Պետրոսը լռելեայն, խորհրդավոր սեղմում է Արտաշէսի ափը: Արտաշէսը, փաղաքշանքով, մի թեւով գրկում է Պետրոսի թիկունքը... Ու շնչերը պահած, ամենայն լռությամբ եւ զգուշությամբ նրանք ոտք են դնում խճաքարով հատակված նեղ փողոցի վրա, կտրում անցնում այն մի ակնթարթում...

ԱՐԴԱՐ ՎՐԵԺԻ ՍՐԲԱԶԱՆ ԺԱՄԸ ՀԱՍԵԼ ԷՐ...

Միայն մի քայլի վրա էր գտնվում «Իսլամի Արծիվը», հայ ժողովրդի ոխերին թշնամին, մեծ մարդասպանը, որի հրամանով հարյուր հազարավոր հայ մանուկներ ու կանայք տանջամահ եղան Ուրֆայից մինչեւ Տեր-Չոր...

Արտաշէսը բարձրահասակ, թիկնեղ, լայնաճակատ, խոհուն, լուրջ դեմքով, բայց անչափ համակրելի ու առինքնող երիտասարդ էր: Դեռ 13 տարին չլրացած նա դիմել էր պանդխտության՝ Դոնեցի ածխահանքային մարզը, որտեղ աշխատել էր որպէս հացագործ բանվոր եւ այնտեղ էլ, պրոլետարական միջավայրում ստացել էր դաստիարակությունը:

Եթե կամավորական շարժման նա չէր մասնակցել, ասելով, որ Յարի տված զենքը բանվորների արյունով է ներկված՝ ես չեմ բռնի,

ապա երբ հրապարակվեց Խորհրդային իշխանության ոսկետառ դեկրետը Թուրքահայաստանի ինքնորոշման մասին, նա ողջունելով այն՝ ոգևորությամբ բացականչել էր.

- Մեծ Լենինը մեծն Ալեքսանդրի նման մի հարվածով լուծեց անլուծելի համարվող հայկական հարցը...

Եվ Դոնբասի նորաստեղծ Ռեկոմից ստանալով զենք ու զինամթերք, նա մի խումբ ընկերների հետ անմիջապես մեկնեց Հայաստան, Կարին, եւ որպէս շարքային զինվոր մասնակցեց կռիվներին, նա մասնակցեց նաեւ Ղարաքիլիսայի հայտնի հերոսամարտին, կռվի դաշտում ցուցաբերելով անկրկնելի քաջություն ու խիզախություն, որով արժանացել էր գնդապետ Սամարցյանի շնորհակալության ու պարգևատրման...

Ապա, երբ այն ժամանակվա հայ ղեկավարները կապիտուլացիայի ենթարկեցին, Արտաշեսը միանալով ժողովրդական հերոս Անդրանիկին, նրա դրոշի տակ մասնակցեց այն բոլոր դյուցազնական մարտերին, որ մղվեցին 1918 թվի ճակատագրական օրերին ընդդէմ Անդրկովկաս ներխուժած, հայի արյան ծարավի թուրք փաշաների գերագանց ուժերի դէմ...

Պետրոսը, միջառնակ, միշտ ուրախ ու զվարթ դէմքով, կատակասեր, միշտ չարաճճի երիտասարդ էր. նա նույնպէս դեռ 13 տարեկան երեխա, դիմել էր պանդխտության, Խարկով քաղաքը, որտեղ փռերում բանվորություն էր արել: 1916 թվին, երբ Ռուսական բանակը գրավեց Խոտորջուրը նա մի քանի ընկերներով մեկնել էր Խոտորջուր, իր հայրենի կիսավեր ու թափուր գյուղը՝ Վերին-Մոխրակույտը վերաշինելու: Նա հավատացած էր, որ փյունիկ թռչունի նման իր հայրենի Մոխրակույտը մոխիրներից կվերածնի ու նորից կապրի, նոր, վերածնված կյանքով:

Սակայն շուտով թուրքական փաշաները օգտվելով անդրկովկասյան հակահեղափոխական կուսակցությունների հայամերժ դավաճանական գործունեությունից քաղաք քաղաքի ետեւից գրավում էին Հայաստանը... Ահա այդ առաջխաղացման սկզբին, դեռ Բայբուրդը չգրաված, Թուրքերը օղակել էին Խոտորջուրը...

Խոտորջուրցիները՝ մոտ 100 կռվողներ Պետրոսի եւ մի քանի ընկերների ղեկավարությամբ կարողանում են կազմակերպել ինքնապաշտպանության գործը, հետ են մղում թուրքական կանոնավոր զորքերի հրետանու եւ հազարավոր խուժանի բազմաթիվ հարձակումները եւ միայն այն ժամանակ, երբ վերջանում են իրենց բոլոր տեսակի պաշարները, երբ Թուրքերը արդեն գրավել էին Ղարսը եւ դրսի օգնությամբ հույսերը մարել էին, միայն այն ժամանակ թողնում են Խոտորջուրը: Պետրոսը այդ հերոսական ինքնապաշտպանության ղեկավարի դերում իրեն ցույց է տալիս ոչ միայն որպէս քաջամարտիկ կռվող, այլեւ կարող ռազմական հրամանատար եւ կազմակերպիչ...

Ողջ մնացած խոտորջուրցիները (մոտ 25 հոգի միայն) թողնելով հայրենի գյուղը՝ կռվելով ճամփա են բաց անում դեպի Լազիստան,

այնտեղից Կովկաս անցնելու համար... Այդ ողիսական ճանապարհորդության ժամանակ տիֆլից հիվանդացավ, անզգա դրության մեջ վերջ ի վերջո նրանք ընկնում են թուրք իշխանությունների ձեռքը, շխթայակապ տարվում են Տրապիզոնի բանտը, դատապարտվում կախաղանի, որը մի ինչ որ բարենպաստ հանգամանքով եւ Սամուշ գաղեի օգնությամբ փոփոխվում է 101 տարվա բանտարկության...

ԵՎ միայն Թուրքիայի պարտությունից հետո, դաշնակիցների պահանջով՝ Տրապիզոնի բանտից ազատվում են ու մեկնում Բաթում, որտեղ եւ Պետրոսը հանդիպում է Արտաշեսին...

Բաթումից նրանք մեկնում են Հայաստան, զինվորագրվում եւ ազնվաբար, անմռունչ տանում են այն ժամանակվա շարքային հայ զինվորների դառնությամբ ու զրկանքներով լի չարքաշ ու անփառունակ կյանքը, հավատացած լինելով, որ իրենք օգուտ են բերում իրենց բազմաչարչար ժողովրդին, ծառայում են հայ ժողովրդի դարավոր իղծերի իրագործման, Թուրքահայաստանի ազատագրման վսեմ գործին:

Եվ ահա այժմ, այդ երկու հայրենասեր ու քաջակորով երիտասարդները մահասարսուռ, հատով զենքերը ձեռքներին, վերածնված հայ ժողովրդի այդ գիտակից ու վրեժխնդիր զավակները գրոհում են արյունակակ թուրք փաշայի վրա, որը մարդկային կերպարանք առած հոշոտել է իրենց ժողովուրդը, որը ուզեցել է, որ աշխարհում ոչ մի հայ չմնա...

Այդ պահին,- պատմում էր Արտաշեսը- երբ արդեն այնքան մոտեցել էինք Ջեմալին ու հաստատ էր, որ նրա համար այլևս ոչ մի փրկություն չկա, այդ վեհ վայրկյանին՝ այն գիտակցությունը, որ մեզ գերագույն բախտ է վիճակվել ի կատար ածել մեր միլիոնավոր նահատակների վերջին կամքը, նրանց կտակը՝ պատժելու, վրիժառու լինել ջանալներից, էությունս համակվեց մի անպատմելի, անհունորեն հաճելի երանությամբ... Աչքերս վառվեցին մի եզակի, երկնային ջերմությամբ... Ու քույրս, Ուրֆայի մոտերքը գազանաբար հոշոտված դեռ 16 տարին չլրացած մեր չքնաղ Աննիկը, աչքերիս առաջ է կանգնում այդ պահին, ձեռքերը ծոցին, գլուխը խոնարհ... Իմ նահատակված քույրը...

Նրանք հետ են նայում... Մեկը ձեռքը տանում է գրպանը... Ուրեմն զենք ունի... Գուցե Ջեմալի ընկերները զերծ մնային պատժից, եթե զենք չկրեին...

-Փաշա~, փաշա~... Հիշիր Ուրֆան եւ Տեր-Չորը...-գոչում են:

ԵՎ առանց նշանառության, մեկական պահունակ փամփուշտ կրակում ենք նրանց վրա: Անմիջապես ընկնում են, երկուսը մեր առաջին, արողը մի քիչ այն կողմ: Պարզ է, նրանց մահը վայրկեանական է... բայց նորից ենք կրակում արդեն ահ ու սարսափ տարածելու եւ մեր հեռանալը ավելի ապահով դերձնելու նպատակով... Ես մի աբոյմա (պահունակ) կրակում եմ դեպի Երմուկյան վերելքը, Չեկայի կողմը, որ այնտեղից դեպքի վայրը փութալու սիրահարներ չլինեն... Պետրոսի հետ կրակում ենք եւս

զգուշութեան համար տանը չի քնուն, իջնու է փուռը, ֆարտուկ կապում, սկսում է խմոր գնդել...

Նույն գիշերը Չեկայից Վանյա Գեւորգովը ձերբակալվում է Գեւորգ Գեւորգյանին, որոնց տանը հյուր էր նա գալիս, նա նաեւ փուռ է մտնում, նայում շուրջը, տեսնում է Արտաշեսին ձեռքերը խմորի մեջ աշխատելիս, ու հեռանում է:

Գեւորգին հավանորեն ձերբակալել էին, որպես Թիֆլիսում նշանավոր անձնավորություն, հարուստ մարդ (ըստ իրենց պրոֆիլակտիկ ցուցակի...)

Արտաշեսն ու Պետրոսը զոհվել են 1937 թվին: Արտաշեսը 1957 թվին բոլորովին արդարացվեց խորհրդային դատարանի կողմից:

ՎԵՐՋ

«خلیج فارس» و دگرگونی نام آن

نوشته: ریچارد فرای

ترجمه: ادیک باغداساریان

پس از سقوط دودمان پهلوی، نام شهرها و خیابان‌ها دچار دگرگونی‌هایی شد، لیکن این دگرگونی شامل حال رودها، کوه‌ها و دیگر جاها نگردد. با اینحال، در گذشته چنین دگرگونی‌نامه‌های جغرافیایی روی داده است. این مقاله در نظر دارد به تغییر و تحولاتی بپردازد که در زمان تحول تاریخی ایران از دوران شاهنشاهی ساسانی به دوران اسلامی بوقوع پیوسته‌اند.

معمولا نام رودها، خلیج‌ها و دیگر مقولات فیزیکی کاملا ثابت هستند با این حال در همین دوران تحولی برخی مکان‌های جغرافیایی به چند نام نامزد شده‌اند. نخست به این امر باید اشاره کرد که تازیان نام «خلیج عربی» را برای «خلیج فارس» بکار می‌برند. پیش از دوران هخامنشی و یا حتی خیلی پیش‌تر از آن، سخن‌گویان به زبان اکدی و در دوران بعدی آشوریان، آن را «خلیج پست» یا «دریای پست» نامیده‌اند. احتمالا گاهی هم نام «دریای بزرگ خورشید طلوع کرده» را داشته است لیکن حتی در زمان کورش بزرگ اساسا «خلیج پست» به آن اطلاق می‌شد. گسترش اسکان اقوام پارسی در آن نواحی که نام آنها را بر خود داشت (فارس کنونی) باید باعث دگرگونی‌هایی در نامهای جغرافیایی شده باشد، زیرا نام «دریای پست» با واقعیت برابری نمی‌کرد. این امر برای ساکنان بابل که در شرق قرار داشت قابل درک بود. متاسفانه تا آنجا که برای ما آشکار است نه الواح ایلامی تحت جمشید و نه سنگ‌نبشته‌های پارسی از این خلیج یاد نکرده‌اند و ما تنها از مولفان پس از اسکندر مقدونی از آن آگاهی می‌یابیم. **هرودوت** (۲-۱۰۲، II) تنها از خلیج عربی یا سوئز یاد می‌کند و نه «خلیج فارس». در این جا باید خاطر نشان شد که

پس از سفر **نئاگوس** فرمانده نیروی دریایی اسکندر مقدونی، آگاهی می یابیم که هم دریای سرخ و هم خلیج فارس به آن اقیانوس بزرگی مرتبط بودند که یونانیان به آن نام دریای اریتره («سرخ») اطلاق می کردند. و گهگاه هر دو خلیج نام خود را از اقیانوس اخذ می کردند. بدین سان «خلیج فارس» نزد **اراتوستنس** بچشم می خورد که **استرابن** یاد کرده است (XVI, C. ۷۶۵). علی رغم این که استرابن در جایی دیگر آن را «دریای پارس» می نامد این نام تا زمان ما پیوسته باقی مانده است که می توان آن را بصورت **Colfo Persico** نزد **بطلمیوس** (VI, ۴)، «تاریخ اسکندر» نوشته **آریانوس**، (۵ VI, و نزد **راونای جغرافیدان** (V, ۱۷)، در جاهای دیگر تایورش تازبان یافت.

بر خلاف مطلب فوق، نام «خلیج عربی» به «خلیج سوئز» یا «دریای سرخ» مربوط می شده است (استرابن VII, ۷۵۹، ۷۶۷ و غیره) منابع دیگر چون «جهان نما» (**آشخاراتسوئیس**) که به **موسس خورناتسی** منتسب بود (اکنون ثابت شده است که به قلم **آنانیا شیراکاتسی** تعلق دارد)، همچنین تاریخ آشوری **بارهرئوس** (منتسب به بارهرئوس) نام «خلیج فارس» را بکار برده اند. تنها در جغرافیای آشوری **بارهرئوس** دروغین (منتسب به بارهرئوس) به آن «دریای ایلامیان» اطلاق شده است.

در دوره اسلامی، می توان اذعان کرد که همین سنت ادامه یافت و همه جغرافیدانان پارسی و تازی نام «بحر الفارسی» یا «خلیج فارس» (دریای پارس یا خلیج فارس) را بکار برده اند. تنها **مقدسی** (۸-۴۱۹) آن را «دریای چین» (بحر الصین) نامیده است، در حالی که **مسعودی** در «کتاب التنبیه» خود (۳-۵۱) خلیج را بخشی از «دریای حبشه» می داند. از نظر تاریخی این نامگذاری مبرهن و حتمی می نمود اگر کشف جدید دانشمند عراقی یعنی «خلیج عربستان» روی نمی داد لیکن مسئله توسط یک متن دیگر یعنی «شهرستان های ایران» پیچیده تر می گردد زیرا در آن لفظ «واری تاجیکان» بکار رفته است که دریاچه عرب ها ترجمه می شود (سخن در باره خلیج فارس است).

اواخر دوران ساسانی یا اوایل دوره اسلامی، همانگونه که همه متفق القول هستند این متن پهلوی نگاشته شده و لفظ «واری تاجیکان» می توانست به معنی «دریاچه عرب ها» یا «منطقه بسته تازیان» باشد در حالی که می توان بگونه های دیگر نیز آن را استنباط نمود. این واژه مرکب باید به معنی یک منطقه جغرافیایی باشد که ما در متون پهلوی یافته ایم. اگر نام خلیج فارس در ادبیات پهلوی یافت می شود، پس باید از شیوه نامگذاری اوستایی سرچشمه گرفته باشد. برای نمونه در «مینوی خرد» متن پهلوی سده های میانه (۱۴-۴۴) به این عبارت بر می خوریم «آب از اقیانوس پوتیک به دریای وارکاش باز می گردد».

بعدها اقیانوس پوتیک بصورت اقیانوس هند و اما «وئوراکاشا»ی اوستایی بصورت «خلیج فارس» تفسیر شده است. با این حال این امر کمکی به حل مسئله مورد بحث نمی کند. بنابر این ما مجبوریم به دو قطعه ای اشاره کنیم که در اول (#۲۵) نوشته شده که شاپور پسر اردشیر شاهزاده ای بنام **مهورزاد** را به «مرزبانی»، «هرا» بالاتر از «وار عرب ها» منصوب می کند، از آنجا که واژه «وار» در آغاز به معنی «منطقه بسته» بوده است پس ما باید تصمیم بگیریم که سخن در باره خشکی است یا دریا. در بخش اول از قطعه های یاد شده «هرا» خشکی است، اما «حجر» اگر همان «الحجر» سواحل عربی خلیج فارس باشد به مفهوم «دریا» دلالت می کند، اگر چه حجر با «الحفوف» که دور از سواحل یاد شده واقع است، همسان گردیده است.

ما «دیوار عرب ها» را برای استنباط «هرا» و نیز «حجر» پیشنهاد کرده ایم. با این فرضی که سیستم استحکامات ساسانی از «هرا» تا «حجر» حتی تا مناطق دورتر امتداد داشت. اگر قطعات یاد شده را از نظر جغرافیایی بررسی کنیم، باید بگوییم که اردشیر مرزبانی برای خلیج فارس منصوب کرده بود، که مرکزش «حجر» بود و فرزند او شاپور محل او را به «هرا» تغییر داد. استحکامات مدت ها پس از حکومت اردشیر و پسرش

شاپور بنا شده است. اگر واژه «وار» را «دریاچه» یا «حوضچه» تفسیر کنیم پارسیان برخلاف دیگر منابع خلیج را «عربی» نامیده اند.

نظر بر این است که ساکنان یک منطقه، دریا یا آبهایی که آنها را از کشورهای دیگر مجزا می سازد به نام آن ملت یا کشور نامزد می کنند که کشتی های آنها در جهت آنها قرار دارند، لیکن «کانال انگلیس» یا «دریای ایرلند» با این تفسیر مصداق نمی یابند. آیا پارسیان خلیج را در تمام دوران پیش از اسلام «عربی» می نامیدند یا ساسانیان نام آن را تغییر دادند؟ گزینه دوم کمتر محتمل است، بنابراین می توان نتیجه گرفت که پارسیان نام «خلیج تازیان» را همواره بکار می بردند و این ساسانیان نبودند که نام را تغییر دادند. بلکه عرب ها بودند که پس از فتوحات خود چنین تغییر داده اند.

لیکن در دوران اسلامی است که نام «خلیج فارس» را چه در منابع پارسی و چه منابع عربی می بینیم. بنابراین ما در یک تنگنا و بن بست قرار می گیریم که آسان ترین راه برای خروج از آن قبول این فرضیه است که «واری تاجیکان» یاد شده در متون پهلوی به معنی «منطقه عربی» یا «منطقه بسته» است تا «دریاچه» یا «دریا».

از سوی دیگر باید فرض کنیم که با پذیرش فرضیه فوق، باید از واژه، «وار» «منطقه بسته» استنباط کرد و نه «دریاچه»، «دماغه» و غیره. با پذیرش مطالب یاد شده باید قطعات فوق را چنین تعبیر کرد: «شهر هرا توسط شاپور پسر اردشیر بنا شده است، و هم او **میرزا داهل هرا** را مرزبان استحکامات عربان گردانید». و دوم آنکه «شهر آشور، شهر وه-اردشیر است که توسط اردشیر فرزند اسپندیار ساخته شده ...».

سر انجام، اگر «واری تاجیکان» نامگذاری خلیج فارس توسط ساسانیان بود، این امر در «جهان نما» (آشخاراتسویس) ارمنی نیز باید منعکس می گردید، جایی که لفظ «خلیج فارس» قید شده است. علی رغم آنکه نمی توان ثابت نمود اما بنظر می رسد که لفظ «واری تاجیکان» معادل «دشت تاجیکان» باشد. بنابراین هیچ دلیلی ندارد که فکر کنیم خلیج فارس نام دیگری داشته است.

آپاگا فصلنامه بین المللی ایرانشناسی و ارمنی شناسی

شماره ۵۴ تابستان ۱۳۹۲

صاحب امتیاز و مدیر مسئول

ادیک باغداساریان

صندوق پستی شماره ۹۴۸۸-۱۵۸۷۵

تهران - ایران

نشانی اینترنت www.apagaonline.com و www.apagamonthly.4t.com

apaga98@hotmail.com

پست الکترونیکی

ISSN 1682-5438

فهرست

فارسی

خلیج فارس و دگرگونی نام آن

ترور جمال پاشا

ارمنی

انگلیسی -

مقالات و دیدگاه های مندرج در نشریه لزوماً بیانگر موضع "آپاگا" نیست.
نشریه در حک و اصلاح مقاله ها مجاز است.
مقالات و مطالب رسیده باز گردانده نمی شود.
استفاده از مطالب "آپاگا" با ذکر ماخذ آزاد است.

شمارگان ۱۰۰ بها ۵۰۰ تومان

چاپ احسان-تهران چهارراه ولیعصر پلاک ۱۱۴۸

APAGA

Quarterly

آگا
فصلنامه

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական եռամսյա հանդես
An International Journal of Oriental Studies



ISSN 1682-5438

شماره ۵۴ تابستان (شهریور) ۱۳۹۲

No. 54, September 2013